* Որ եղև առաջնորդ ոանելեացն յամ ։ Ամ ունողաց, այս-
է՝ ըմբռնողաց զայս. գործ. Ա. 16։
Երբեմն և առնուն զհայցական. զոր օրինակ, * Ն-
տուն զարծաթն զպատրաստեալն 'ի ձեռս գործելոց
զգործս կահի տանն ամն ։ Ամ գործողաց զգործս ։ Եզ.
Ա. Նեհ. ԺԲ. 11։
* Յօր լսելոյ քո զաւետիս՝ խնդրեա լինել մեզ լսելի՝
զձայն աւետեաց քո միածնին. եթէ եկայք օրհնեալք
հօր իմ ։ այսինքն խնդրեա լինել մեզ լսող զձայն
աւետեաց միածնի քո. այս է՝ եկայք օրհնեալք,
և այլն. Ղար. ՃԷ։
* Ել եղիցի՝ իբրև մեսեցին ոսոք քահանայիցն կրելոց
զտապանակ ուխտին ամն Երկրի՝ 'ի ջուրն յորդա-
նանու, պակասեցէք ջուրն ։ Ամ կրողաց զտապա-
նակ ուխտին. յեսուայ. Գ. 13։
Իսկ վն ելունելութեանց՝ որք յանգին 'ի լայ՝ գիտելի է
զի

զի՝ ոչ միշտ իբր բայ վարին. որպէս սասացաք յերկրորդ մասին. գլ. իզ. տես անդ։

ԳԼՈՒԽ. ԼԸ։

Յաղագս համաչեցնելոյ պարենեանոյ՝ ընդ հարցմանն։

Յորժամ՝ ի բանս պատասխանն լինի իմիք հարցմանն, հարկ է՝ զի պատասխանին համաձայնեսցի հարցմանն՝ գոնէ զօրութիւն։

Աւյս համաձայնութիւն։ Նախ՝ նկատի ելս հոլովին. գր, * (հրց). Օ՞ինչ է կաթուղիկէն. (պարենեան). Տիեզերական. զի՞ամ եկեղեցիք ուղղափառաց՝ որ ելս տիեզերս են, մի՞ են...զոր և առաքելական կոչեմք։ խոսրով։ * Իսկ արդ՝ ո՞վ է պօղոսն։ կամ է ապօղոսն։ (պարենեան). Պաշտօնեայք, որովք հաւատացիքն։ ա. հոր. գ. 4։ Դարձեալ. * Ո՞ՀԱ առինչ իրս բարկանայ։ (պարենեան). Ընդ մեծատանց անիրաւութիւն, և ելս աղքատաց հրապարտութիւն։ պարոյ. աղէր։ * Ա՞ւմ են նման սոքա։ (պարենեան). Ամանն են մանկանց՝ ոչ անմեղաց, այլ՝ յիմարաց։ էփեսա. է. 30։

Երկրորդ՝ նկատի ըստ զօրութեան նշանակութեան բառիցն. իբրզի՝ պատասխանին լսցի այնպիսի բառիւ, որ հաստատեսցի զտցի զօրութեան հարցմանն, թէ՝ ելս որպիսութեան, թէ՝ ելս տեղւոյն, և թէ՝ ելս ժամանակին, և այլն. ոչ երևի յօրինակսդ՝ որ զկնի։

* Ինքնացուցեալն զՀետ քեռի այսպիսի Ճանապարհաւ ուր լինին օթևանք։ (պարենեան). Ա՛յլ՝ի հարկս համապատիւ ծառայից, այլ՝ ուր ոչն է ամենեցուն։ ընդրկ. ինքն։ Դարձեալ. * Ա՞ստի արդեօք կոչեաց (զմեղ ոչ ծ)։ (պարենեան). Ի՛ վհաց, ի՛ փոզոցաց, ի՛ Ճանապարհաց և ի՛ ցանկոց։ (հց)։ Այս ոչ արդեօք կոչեաց։ (պարենեան). Ի՛ հրեշտակական պատիւ, ի՛ սրովբէական սրբաբանութիւն, յաճուութեան փառս։ սարգ. է. պեր. ա։ * Օ՞ՀՄ ապա՝ ի խաւարի. չՀՄ՝ի ստուերս մահու։ (հց). Ի՞ր վասն։ (պարենեան). Ա՞ռ զի փոխեցաք՝ ի մահ. ոչ՝ի՞ կեանս։ (հց). Օ՞ խաղդ, և սրո՞վ օրինակաւ։ (պարենեան). Օ՞ի սիրեմք զեղբարս։ սարգ. ա. յոՀն. ե։ Աւյլազգ՝ և։ * Օ՞ լակոնացի ոմն հարցեալ, ուր սահմանք

մանք սպարատաց։ Նորա պնիղակն ցցեալ՝ ասէ • Յայտմ վայրի ‖ • պեռոյ։

*Զեքսանդրոս մակեդոնացի հարցեալ յումեմնէ, ուր են քոյ գանձք։ ցուցեալ զսիրելիսն՝ ասաց. Ի սոսա‖. պեռոյ։

Այլ ասա գիտելի է, զի բայն՝ որ ներգործութիւն դնի 'ի հարցման, իբր 'ի բազումս զորութիւն գտանի 'ի պատասխանին • ոչ է տեսանել 'ի վերոյգրեալդ։

Եւ երբեմն եւս փոխանակ այնր բառի՝ որ լինելոց էր բուն պատասխանի հարցմանն, դնի բան ինչ՝ իբր բացայայտիչ զորութիւն իմացեալ բառին • որ, * Օ ինչ է զոր կարդացերն։ (պե) • Օ մի ասէ խնդրեցի, և զոյն աղաչեմ։ (հց) • Եւ որ է այն։ (պե) • Ընակել ինձ 'ի տուն քոն, և շուրջ զսեղանովն երգել ‖ • Խոսրով։

Գիտելի է եւս, զի բազում անգամ հարցումն դնի ապառանց պատասխանւոյ • որ, * Ընդէր մերժեցար 'ի պաղոյն շնորհաց՝ իբր զադամ 'ի ծառոյն կենաց‖. Նար. խդ։

*Որ արդեօք զգարշապարս ոտին կառուցիս • և կամիր վստահութեան զաչս իմ յառեցիս ‖ • Նար • կբ։

*Որ ընտրելի ինչ • 'ի միանգամն կորուսանել զամենայն պատիւն, եթէ համբերութիւնն կրկին յաւելուածով ստանալ զնա ‖ • ապրդ • յակ • որ • յորդորակ։

ԳԼՈՒԽ • ԼՀ։

Յաղագս կպչմունեաց բանի, և պէսպիսառութեանց շարադրութեանց։

Ի համաձայնութենէ մասանց բանի կազմին տեսակք շարադրութիւնք բանիւ • ոմանք սակաւաբառք, և ոմանք բազմաբառք։

Սակաւաբառք կազմին 'ի սակաւ բառիւ՝ գոնէ յերիս որ 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի խնդրոյ նորին • որ, * Թորգոմ ծնանի զՀայկ ‖ • խոր • ա • 4։ Որ կան երեք բառք • որ անուն բայի, բայ, և խնդիր։

Բայց երբեմն մին յերից աստի զորութիւն դնի • զոր որինակ, * Ամբրեցոյց ծուլութիւն ‖ • որ Թմրեցոյց զսրտմոն ծուլութիւն • Նար • խբ։ * Ընկալ զսովեալս • որ դու ընկալ զսովեալս • Նար • խե։ * Ընդեսն անյայտ ‖ • որ անցեալն է անյայտ • Նար • ծե։

Իսկ

Իսկ բազմաբառք կազմին 'ի բազմ բառից՝ այլև այլ ե-
ղանակաւ շարայարելոց ըստ միմեանս. ոմք իբր խնդիր,
իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական,
ևն. ոմք յայտ է 'ի բազում օրինակաց եդելոց 'ի քերա-
կանութեան ասա. և յայտնի ևս ցուցցի 'ի յաջորդ օրի-
նակացդ։ Արդ՝ այսպիսի շարադրութիւնք՝ թէ բազ-
մաբառք և թէ սակաւաբառք՝ երբակի կարեն կազ-
մել, Պարզ, միջակ, և խրթին։

Պարզ շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի դիւրին
շարայարութենէ ընտրեալ և սովորական բառից. և է
դիւրըմբռնելի ամենեցուն։ Որ այս ունի զերկուս տե-
սակս. որոց մին կոչի դեղջուկ և աղաւաղ. և այս՝
կամ վասն անպատշաճ շարայարուն կարգի, և կամ վասն
խորդ բառիցն. որպիսի են գրեանք ինչ՝ զորոց զհեղի-
նակսն չէ արժան յիշատակել ասա։ Իսկ միւսն ասի՝
հարթ և հեշտ. ոմանք են շարադրութիք յայսմաւուրաց,
և հարանց վարուց. ևն։

Միջակ շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի վայելուչ
շարայարութենէ ընտիր բառից. և չէ դիւրըմբռնելի
ամենայնի։ Որ սա ունի զհինգ տեսակս. որոց Առա-
ջինն ասի՝ ստորին. ոմանք են շարադրութիք զաքարիայ
կաթուղիկոսին 'ի մեկնութիս երգոց երգոցն, և 'ի մեկ-
նութեան մատթէի, և 'ի Ճառս ինչ. գրիգորի արշարու-
նեաց եպիսկոպոսի 'ի մեկնութեան դրոցն կիւրղի. ևն։
Երկրորդն ասի՝ պատկանաւոր, ըստ որում յայլոց ազ-
գաց երևի պատկանեալ լեզուի մերում. ոմանք են շա-
րադրութիք թարգմանեալ գրոց. այս է՝ կոչումն ըն-
ծայութեան սրբոյն կիւրղի. մեկնութիք սրբոյ գրոց՝ յովհաննու
ոսկեբերանին. մեկնութիւն յովհաննու՝ արարեալ նանայի
իմաստասիրին ասորւոյ. գիրք պարապմանցն կիւրղի ա-
ղեքսանդրացւոյ. դործք գրիգորի ճծաբանին. գործք
սրբոյն բարսղի. գործք սեբեբրիանոսի եմեսեան. մեկ-
նութիւն յոբայ յիսիւքիոսէ. Ճառք, և մեկնութիւն յես-
ուսայ, դատաւորաց և թագաց՝ արարեալ խուրի եփրե-
մի. և այլ ևս գիրք և Ճառք ընդ սրոց հարց՝ թարգ-
մանեալք 'ի մերս լեզու։

Երրորդն ասի՝ ազնիւ և ընտիր. որպիսի են շարադրու-
թիք մեծին խոսրովու. եղնակայ կողբացւոյ. մաշտոց
վար-

վարդապետի · արիստակիսի վարդապետի · անանիա
վարդապետի · պետրոսի սիւնեաց եպիսկոպոսի · աբ-
րահամու մամիկոնեից եպիսկոպոսի · միսայելի եպիս-
կոպոսի · յովհաննու երզնկացւոյ · ԼԲ ։ Այս ևս առա-
ւել՝ շարադրութիւնք գրոցն՝ որ կոչի յաձախապատում,
արարեալ հօր մերոյ սրբոյն գրիգորի լուսաւորչի ։
Առրորդն ասի՝ շքեղ և պանծալի · ոչի են շարադրու-
թիւնք եղիշէի, իգնատիոսի, և սարգսի, յովհաննու ման-
դակունւոյ ։ Այս կարգ դասին և շարադրութիւնք սրբ-
գրոց · յորս իւրաքանչիւր գիրք՝ մի քան զմի սքանչելի և
յարգոյ երևին · և առաւել ևս սոքա, պատմութի-
յուդիթայ, գիրք իմաստուէ, մարգարէուն եսայեայ,
և երկոտասան փոքր մարգարէից, թուղթքն պետրոսի,
և թուղթն պօղոսի առ եբրայեցիս ։
Հինգերորդն ասի՝ դերապանծ և վսեմ · որպիսի են
շարադրուիք ներսեսի հնորհալւոյն · և ներսեսի լամբ-
րոնացւոյն, որոց կազմութիւնք՝ քան զամ հիւսուածս
բանից դերապանց գտանին յոյժ, ընտիր և վայելուչ
բառիւք, քաջայարմար դասաւորութիւն ոճից, և վսե-
մական շքեղութիւն կարգի խօսից ։
Լրթին շարադրութիւն ասի՝ այն, որ կազմի 'ի ման-
ուճածոյ շարայարութիւն ընտիր և մթին բառից զոր
իմաստնոց միայն է իմանալ ։ Այս սա ունի զերիս տե-
սակս · որոց Առաջինն ասի՝ հոյակապ · ոչի են շարա-
դրութիւնք նարեկացւոյն · և յովհաննու իմաստասիրին ·
և քանի մի կանոնք 'ի շարականի · ևս և բանք ինչ 'ի
զանազան գրուածս · ընդ որս կարէ դասել և շարա-
դրութիւն յովհաննու կաթուղիկոսին · և գիրքն մա-
կաբայեցւոց ։
Երկրորդն ասի՝ դժուարին · որպիսի են շարադրուիք
մանրսեսի խորենացւոյն · ագաթանգեղոսի · մամբրէի
վերծանողի · դաւթի անյաղթին՝ 'ի ձառ խաչին · սա-
հակայ կաթուղիկոսի · ԼԲ ։
Երրորդն ասի մթին · որպիսի են ոմանք 'ի թղթոց
գրիգորի մագիստրոսի · 'ի շարականն, 'ի նարեկն, 'ի
խորենացին, 'ի գիրս յովհաննու իմաստասիրի, ԼԲ ։
Այլ գիտելի է նախ, զի յասել մեր ասա՝ շարադրու-
թիւն պարզ, միջակ և խրթին, նկատեմք ։ Եթէ որ-
ոչ ևս

ուեստի քերականութիւն, և ոչ ՝ի ոՀոյ Հարտասանութիւն։
զի Հարտասանք Հայելով ՝ի ձեռս և ՝ի փոխակերպուիս
բանից՝ որոշեն զերիս տեսակս ոՀոյ շարադրութեան։ զորս
[illegible]ոշեն, պարզ, միջակն և վսեմական։ Լսակ՝ քերականք
Հային ՝ի կարգաւորուիս բառից, և ՝ի պարզութիւն և
՝ի խրթնութիւնն, և ՝ի այսմ որոշեն։ Լուստի երբեմն
շարադրութիւն ինչ ըստ քերականաց պարզ՝ կամ միջակ՝
՝ի Հարտասանից Համարի վսեմ և խրթին։ որպիսի է
այս բան։ * Լեաք Հինից և տեգ ՝ոն տեղացին ՝ի մեզ։
[illegible]։ կամ։ Լս ներՀակ այսմ՝ երբեմն շարադրութիւն ինչ
՝ի քերականաց խրթին՝ ՝ի Հարտասանից Համարի պարզ։
որպիսի է այս բան։ * Լանզի զեղման ՝ի վերայ մեր
փրկչին ՝նորՀաց՝ տուՀան նշանակք՝ գոՀուին ՝նբ և միւ-
ռոնն սրբարար ॥։ լամբ։ ապէն։

Գիտելի է երկրորդ, զի ՝ի կարգել մեր ասա զպէտս
մատենագիրս ՝ի մի դաս, ոչ կամիմք ցուցանել, թէ
քերթուՀածք սոցա միօրինակ են։ այլ թէ սոքին յայս
դաս վերաբերին, և նոքին յայն։ Լայց ՝ի Համեմա-
տելն առ միմեանս՝ այլևայլութիւն բազմ գտանի ՝ի մէջ
նց։ ոՀ ՝ի բաղդատել ՝ի միմեանս զշարադրութեան եղի-
ցի և սարգսի, որք ՝ի մի դաս շքեղ շարադրութեաց դը-
նին, կազմութիւն միոյն ուրեք ուրեք պարզ երևի քան
զմիւսոյն։ ՝ի այսմ իմն և վՀ այլոց։

Գիտելի է երրորդ, զի յիւրաքանչիւր վերոյկարգեալ
դրեանս կարեն գտանիլ երբեակ տեսակք շարադրու-
թեաց։ ոՀ ՝ի գիրս նարեկացւոյն՝ որ ՝ի գլուխս խրբ
թին շարադրութեաց դասի, գտանի ուրեք շարադրութիւն
միջակ, և ուրեք պարզ։ և ՝ի գիրս լամբրոնացւոյն՝ որ
՝ի միջակս դասի, գտանի ուրեք շարադրութիւն պարզ, և
ուրեք շարադրութիւն խրթին։ Լս և ՝ի մի և ՝ինոյն գիրս։
ոՀ ՝ի գիրս խոսրովու, որ Համարի ընտիր, է ուրեք՝
ուր գտանի շարադրութիւն գերապանծ։ և է ուրեք՝ ուր
ստորին։ Լոյնպէս և ՝ի թարգմանեալ գիրս՝ ուրեք ու-
րեք գտանի շարադրութիւն վսեմ, և ուրեք ստորին։ Լ՝ ստ
այսմ՝ և յայլ գիրս։ ոՀ տեսցի յօրինակսդ, որ զկնի։

Երրորդ պարզ շարադրութիւն։

* Լոմն իմաստասէր ՝ի Հացկերոյթ կոչեցին։ և նա
,, իբրև

,, իբրև եմուտ 'ի տունն՝ և բազմեցաւ, նայեցեալ 'ի
,, վեր և 'ի վայր և 'ի չորեսին կողմունս տանն՝ ետես
,, զանազան գունովք զարդարեալ, և ազգի ազգի և
,, բանգոր պայծառացեալ. ապա լցեալ զբերանն խխոյ՝
,, եթուք յերեսս տանուտէրն։ Այլ իբրև հարցեալ եղև,
,, թէ ընդի արարեր զայդ, պատասխանի ետ, և ասէ՝
,, և զինչ վնաս արարի. զոր դուք պատուհեալ էիք՝ և ես
,, պատուհեցի. և զոր դուք ոչ էիք պատուհեալ, և ես ոչ
,, պատուհեցի։ Նայեցայ յամ տունս, և տեսի զարդա-
,, րեալ և պատուհեալ ամիւ, և ոչ կարացի թքանել
,, իսկ զերեսս տանուտէրն տեսի անպատիւ, զի ոչ կ
,, զարդարեալ առաքինութեամբ զներքին մարդն. վա՛յ որ
,, և անդ թքի։ Այլ արդ՝ եթէ այսոքիկ արտաքինք
,, որ զձեմարիտ ածածանութիւն ոչ գիտէին, այսպիսի
,, իմն նախանձ ունէին քարեաց գործոց՝ և առաքինու-
,, սէր վարուց, ապա որչափ ևս առաւել մեզ պարտ
,, բաղում զգուշութիւն և փոյթ ունել յառաքինութիւն
,, որք մեծագոյն շնորհաց արժանացաք գալստեամբ
,, քոմի, և պատուհասկան խաչին փրկագործութեան։ խոս-
ղով. 'ի Մեկնութիւն ծամագրի։

Դարձեալ. * Կաքաւն գողանայ զօտար ձուս. և թրթ
,, սեալ՝ ձայն հանէ. իսկ ձագքն իբրև լսեն զձայն նո
,, և զձայն մարն իւրեանց՝ որ ծնաւն զնա, թռուցեալ
,, գնան յերամն իւրեանց։ Այնպէս և բանսարկուն
,, ձեռն մերկաց գողացաւ և հեռացոյց յարարչէն զաղ
,, մարդկան. իսկ նոքա իբրև լուան զձայն մարմնացո
,, ցոյ բանին, գնացին զհետ նոր։ պոպոր. կոմ։

Օրինակ դիպակ զարդարութեան։

* Բաջն վարդան՝ և ամ զօրքն՝ որ ընտ էին, իբրև
,, տեսին զբազմութիւն պատարաստութեան գնդին հեթանո-
,, սաց, հայեցան և յիւրեանց սակաւութենն. թէպէտ և
,, կարի յոյժ նուազունք էին քան զնա, ոչ ինչ զանգի
,, տեցին առ 'ի յոյժ բազմութենէն. այլ՝ առհասարակ
,, միաբան համբարձին յերկինս զձայնս իւրեանց. ա
,, զաղաղակեին և ասէին. դատեա՛ ամ զայնոսիկ, ո՜ւ....
,, Այլ զայս ասելով՝ խուսմբ արարեալ յարձակեին. և
,, զաջ թևն բեկեալ զձախոյ կողմանէն արկանէին.

,, և

,, և սրոյ Ճարակ զնմանն տային. և ընդ երեսս դաշտին
,, փախստական առնէին... Յայնմ տեղւոջ դէտակն
,, 'ի վերս ամբառնայր արշաւիք արշաւանի. գոչէր ա-
,, ռիւծաբար, և յարձակէր վարազաբար. հարկանէր
,, սատակէր զվնուրկն քաջ՝ զեղջայր թշնամիսն դիմեաց.
,, և զբազում համհարզս նորին ընդ նմին կոտորէր. և
,, այնպէս ամբն առհասարակ այր զախոյեան իւր յեր-
,, կիր կործանէր։ Լոյս առ յոյժ յանդուգն յարձակ-
,, մանն՝ յոլովագոյն այն էր, զոր դէտամոյնն առնէին՝
,, քան զանկեալսն սրոյ 'ի ցամաքի. և 'ի բազմութիւն
,, դիականցն անկելոց՝ յստակ ջուրքն դէտոյն յարիւն
,, դառնային ॥. եղիշէ. գ։

* Իսկ 'ի ծագել արեգական Եդեմ մերոց զօրացն՝ 'ի
,, պղնձապատ վահանացն նշոյլք զերամրքն փայլատես-
,, կէին՝ իբրև յամպոյ մեծէ. և 'ի նոցանէ 'ի գուրս
,, ոստէին 'ի մերոց նախարարացն քաջք զրահաւորք
,, ոգի 'ի փայլատականցն Ճառագայթք. յորոց 'ի տե-
,, սուէն միայն զանդիտէլ պարսկականն դուռնդ, սա-
,, կաւ լինչ և մերն՝ վա՛ ոչ կարել հայել Եդեմ արեգա-
,, կանն ծագման.... և 'ի խառնակել մարտին՝ պա-
,, տահէ կամնարականն յոլանդարատ՝ խմբի մեծի,
,, յորում էր քաջն շերդիր... և հերձեալ զխումբն՝
,, ոգի զանթահալ՝ յերկիր կործանէր զքաջն, և ըզ-
,, խումբն պտուտեալ 'ի փախուստ դարձուցանէր ॥.

Խորէն. գ. 37։

* Լոր Երբեմն (շաբաթոյ և աւուրոյ) զկետ երամակաց
,, ցուրց յանդգնագոյնս արշաւել Ը խորտաքորտս և
,, ընդ վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ շապուհ։
,, Իսկ աւուրոյ մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ. գնա՛
,, գնա՛ ՇՃորդիդ պարսից, եթէ այր լիցես. և նա ասէ.
,, դու՛ երթիջիր. զի 'ի քարինս դիւաց է շահաւակել։
,, Դարձեալ՝ յայլս մ'ժամս դիպեցաւ 'ի շամքս կինՃ
,, որսալ հրով. և շապհոյ ոչ համարձակեալ 'ի թա-
,, ւուն քաջարշաւ լինել՝ մինչև շրջապատել հրոյ. և
,, նր զհայեցուածսն յերկուս բաժանեալ՝ այսր անդր
,, բերեալ լինէր երիվարաւն։ Ի՞ուսանգամ ասէ ա-
,, ստուա. ՇՃորդիդ պարսից՝ ահա հայրդ քո և ՇՃ, Ը՞էր
,, զանգիտես։ իսկ շապուհ ասէ. թողեալ 'ի բաց ըզ-
,, կա-

,, կատակելդ՝ յանցանել ԵՎ հուրդ դարձո զքեզ, որ և
,, ես զկնի քո • Քզի յառաջելն՝ ձիս իմ խրատի։ Այն
,, ժամ այպանեաց զնա ատոմ՝ ասելով, միթե և այդ
,, քարի՞նք իցեն՝ զի ես յառաջեցից։ և արդ՝ եթե դու
,, զմոկացիս կոչեսցես զիւաղգիս, ես զասասանեմնադ կո
,, չեմ կնամարդիս։ Այլ մորակեալ զերիվարն՝ իբրև
,, ԵՎ հովիտ ծաղկանց անցաներ ԵՎ հուրն՝ զերծուցան
,, լով զշապուհ ‖ • Խոր • Գ • 55։

Օրինակ խրելին շարադրութեանն։

* Ա՛ռ առ պատուիրանադրեալն ոչ ձկտի հասանել կա
,, նոն, նա յահեղակողմանն դանդաչէ խոտորեալ ձա
,, նապարհի • իսկ որ յառաւելագանցն նկրտի հրամայ
,, ցելոցն հասանել, զաջակողմանն այնպիսին տենչա
,, ցաւ գտանել զխոտորումն։ Մ՝ինն յանդգնաբա
,, յապաշխարուն հոսելով վտանգս՝ յառաւել սնդ
,, թէն յանյուսուն ընկղմի խորս • և միւսն՝ անչափ
,, բար ԵՎարձակեալ թողութենն յուսով՝ զբովանդակ
,, զերկիւղին 'ի բաց լուծանել զկապ։ Իսկ որ յերկ
,, քանչիւրոցն զանդիտեալ հրաժարիցէ ծայրայեղ խ
,, տորմանց, (նա) միջին իմն արդարակ և անսասերի
,, ըստ Ճանապարհաւ բերիցին • յորմէ ոչ փոփոխեսցի
,, նախահարցն հաստատեալ սահմանք • (այս է՝) ոչ
,, ՀՐուենականն աւուր զապաշխարութենն 'ի վերայ ածել
,, զնսիր • և ոչ նմանօրէն սմա զծոմականն դատար
,, կացուցանել և փափկացուցանել զաւուրս • և ոչ
,, դարձեալ յառ դերազանցագոյնն սՀ ուամբ վերա
,, նալ ելանել • ոչ թէ՝ ԵՎ անգործուն և ԵՎ բերանա
,, լուծուն խառնել և զքնոյն խորուն և զգինեՀանու
,, թենն որովայնամոլուն • իսկ 'ի տրտմականան՝ ծան
,, բաբեռնութենն 'ի ներքոյ դնանիլ տկար բնութեան
,, մարմնասպան լինելով յաՀետ՝ ՀՐ թէ ախտասպան
,, և 'ի կքել մարմնոյն՝ գտանել հոգւոյն զվՀատուն
,, տարակուսանս ‖ • յովՀաննէս իմաստասէր • Ե։

* Սուրբ ՀՐծամուխս բարձրացեալն այցելուն նշան սքան
,, չելարուեստ փայլակնաձև փայլմամբ լեսանեալ՝ քա
,, ռասայրեան գոլով բերանաւ, 'ի ձեռն աջողակ ա
,, ջոյն յոմի յեղմամբ շողշողեալ • որ 'ի փրկուն նորոգ
,, ման

,, մանն մարդոյն՝ զՀիսուս ուժգնապիրկս չարին խստուն
,, քան հատեալ՝ խսպառ պարուրեաց . զորեղ երթմամբ
,, ի խոր խոցոտեալ՝ անպատուհաստելի լուծեալ խոր-
,, տակեաց ‖ . Նար . ՝ի գովէանն Խաչի ։

* Իսկ հաւատոյն լուսոյ արմատ և աղբիւր՝ մերուն ակ
,, բնութեան պտուղ՝ բարեբանեալն ածածին , ը երկ-
,, նաւս մաքրապայծառ լուսով կուսուէն ը իւր զՀո-
,, գևորն վառեալ զամպարաշար սքոյն զաստեղն՝ զեր-
,, րորդութեն ը տիեզերս շրջափայլէ հրաշապայծառ
,, Հառագայթ ‖ . Խորէն . ՝ի Հառն վարդավառի ։

* Լ՚ույժմ ամպք՝ ՀՐուանուոյն սպասահարկեալ հրամանի՝
,, լուսատեսակք յարևելից՝ ոսկեՀաՀանչք ՝ի հիւսիսոյ՝
,, զմիմեամբք կուտակեալ ՝ի միագոյն թանձրութե փայ-
,, լակնացայտք՝ որոտընդոստ ցոլաբուղխ առատութ-
,, զտիեզերս արբուցանեն ։ Լ՚ս օդք շնչեալ մաքրագոյն՝
,, բիւրակերպեան ծաղկանցն և տնկոցն երփն երփն
,, զարդուք զՀս պայծառազարդեն պսակեն ‖ . ՝Ի Նոյեմն ։

ԳԼՈՒԽ . ԼԳ .

Յաղագս լուծման պէսպէս հարապարութեանց .

Հարադրութեց լուծումն է որոշումն իւրաքանչիւր բառից միոյ բանի՝ ը զանազան պատշաճութեն նՀ, իբր անուն բայի , իբր բայ , իբր խնդիր բայի , իբր մակբայ , իբր յատկացուցիչ , իբր բացայայտիչ , իբր ածական , ևն ։ Լ՚ըդ՝ թէպէտ յասացեալոցս ցայս վայր կարէ ուսանողն ինքնին լուծանել գրեթէ զՀամ հարադրուիս , բայց առ ՝ի օգնել ևս նՀ՝ մանաւանդ տակաւրացն , և դիւրացուցանել զաշխատանս նոցին , դիցուք ասա քանի մի օրինակս . և լուծցուք զնոսին ։

Լուծումն պարզ հարադրութեանց ։

* 1 , Յարտաքնոցն իմաստասէր ոմն տուն շինեաց .
,, 2 , և դեղագործ ոմն ասաց ցնա , ծեփեա զտուն քոյ ,
,, զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք
,, պատկերաց , և անկուՀածոց յօրինուՀածովք ։ 3 , Լ՚սէ
,, իմաստասէրն , եկ յառաջ նկարեա , և ապա ՝ի վՀր
,, ծեփեցից . 4 , զի զդարշելիսն ծածկելն է բարւոք՝

,, քան

,, քան Լեռ յայտնելն ‖ . Խոսքով . ժամփոր :

Յոյսմ բանի , յառաջինն համարն՝ ածական անունդ
իմաստաբեր՝ է անուն բային . որոյ գոյականն դնի զօրութ .
ցի՝ է՝ այր ոմն իմաստասէր : Որ՝ է մասնական անուն մաս
նաւորիչ նորա . ցի անուանեալս իմաստասէր : Յարականոցն՝ է
բացառական խնդիր մասնական անուանեալս ոմն : Շ՝ ինեա
է բայ : Ցոան՝ է խնդիր սեռի բային ընեալոց . և է՝ անու
ըոշ հայցական :

Յերկրորդ համարն , Լան է շաղկապ բաղդիւսական
Դեղափորձ՝ է անուն բային ասաց : Որ՝ է մասնական ա
նուն՝ ոչ յառաջինն տան : Խնդիր սեռի ասաց բային՝ զ
ըութ դնի . ցի է՝ ասաց զայս . այս է՝ ծեփեա պոռն գոյ
Ցոա՝ է խնդիր բնուռ ասելոյն : Ծեփեա՝ է բայ հրամայ
ական . որոյ անունն դնի զօրութիւն . ցի դոռ : Ս դոռն՝ է
խնդիր սեռի ծեփելոյն : Դոյ՝ է ստացական դերանուն
և լեալ է ածական դոռն : Ս՝ է շաղկապ պատճառա
կան : Լինեալ՝ է բայ դրադէմ , կամ ընդունելուն իր
բայ եղեալ , որոյ անուն բային դնի զօրութ , ցի է՝ իմ
Դեղեցիացուցեալ՝ է բայ , որոյ անունն դնի զօրութ , ցի՝ ե
Ս նա՝ է խնդիր սեռի գեղեցիացուցանելոյն : Լիարուք՝ և ա
քինոճաժով՝ են խնդիր բնուռ նորին : Ս անապան՝ է ածա
կան բառիս նկարուք : Պարկերաց՝ է յատկացուցիչ նորա
Ամենոճաժոց՝ է յատկացուցիչ բառիս յօրինոճաժով :

Յերրորդ համարն , Իմաստասէրն՝ է անուն բային ասէ
որոյ խնդիրն դնի զօրութիւն . ցի է՝ ասէ ցնա զայս ինչ
(որ է հետևեալ բանն) : Ան՝ է չեզոքական բայ , որոյ
անունն դնի զօրութ . ցի դոռ : Լիարեա՝ է բայ ներգոր
ծական , որոյ խնդիր սեռին դնի զօրութիւն . ցի պոռն
Յառաջ՝ է մակբայ ժամանակական նկարել բային : Ա՝
շաղկապ : Ծեփեցիր՝ է բայ ներգործական . որոյ ա
նունն է՝ եա . և խնդիրն դնի զօրութ . ցի դոյն : Ամպ՝ և
՝ի վեր՝ են մակբայ ծեփել բային :

Դ չորրորդ համարն , Ս՝ է շաղկապ պատճառական
Ծածիելն և յայտնելն՝ են անուն բային բարոյ : Ս փա
ղելեան՝ է խնդիր սեռի ծածիելոյն և յայտնելոյն : Դանիել
է շաղկապ նախընտրական՝ ի մէջ երկուց բայից ծա
հել և յայտնել :

Լուծումն գլխոյ շարադրութեան։

* 1, Եւ արդ՝ ոմ՝ ի մասունս մարմնոյ քան զնամ պատ-
„ուական եւ առաջին՝ գլուխն է, յաղագս տեղ-
„ւոյն բարձրութեան եւ զգայարանացն ի նմա եղելոց. եւ
„ապա այլքն յանդամոց մի ըստ միոջէ. 2, այսպէս եւ
„յանդամն հոգւոյն մեծ եւ առաջին իբրեւ զգլուխ է
„հաւատոյն Աստուածութեան. 3, եւ ըստ նմին յարմարեալ
„ոմ անձն ըստ գլխոյ՝ գործք արդարութեան մեծամեծք եւ
„փոքունք՝ ըստ պատուիրանացն քոյ։ ՆՈՐԻ. ԲՆԴԻՒՆԵՐ։
Յայսմ բանի՝ յառաջին համարն, Եւ արդ՝ է շաղկապ
սկզբնաւորական։ Որոշեա՝ է մակբայ նմանական։ Գլուխն
է անուն բայի։ Ան է բայ։ Պատուականագոյն եւ առաջին՝
են ուղղական խնդիր բային։ Քան՝ է նախադրութեան։
Զամ՝ է խնդիր նախադրութեան. եւ այս նախադրութեան
հանդերձ խնդրով իւրով լեալ է խնդիր անուանցս
պատուականագոյն եւ առաջին։ Ի մասունս՝ է երկրորդ խընդ-
դիր նոցին, (զի պատուականագոյնին եւ առաջնոյն). եւ կամ
պատահական խնդիր բայիս՝ է։ Մարմնոյ՝ է յատկացուցիչ
ի մասունսին։ Յաղագս՝ է նախադրութեան։ Բարձ-
րութեան՝ է խնդիր նախադրութեան։ Տեղւոյն՝ է յատկացուցիչ
բարձրութեան։ Ան է շաղկապ։ Զգայարանացն՝ է երկրորդ
խնդիր նախադրութեան։ Եղելոց՝ է ընդունելութեան ի հոլովմն
սեռական. եւ է լեալ ածական զգայարանաց։ Ի նմա՝ է
խնդիր ընդունելութեան։ եւ այս նախադրութեան, զի յաղագն՝
հանդերձ խնդրովք իւրովք լեալ է երկրորդական խընդ-
դիր բայիս՝ է։ Եւ ապա՝ է մակբայ դասական։ Այլքն՝
է անուն բայի. որոյ բայն դնի զօրութեամբ. այս է՝ դասին։
Յանդամոց՝ է խնդիր բառիս այլքն։ Միոջէ՝ է դաս-
ական մակբայ զօրութեամբ իմացեալ բային։
Երկրորդ համարն, Այսպէս՝ է մակբայ։ Հաստատեալ՝
է անուն բայիս՝ է։ Հաւատոյն՝ է յատկացուցիչ հաստատ-
ութեան։ Մեծ՝ եւ առաջին՝ են ուղղական խնդիր բայիս՝ է։
Յանդամն՝ է ներգոյական խնդիր բառիս՝ մեծ եւ առա-
ջին։ Հոգւոյն՝ է յատկացուցիչ յանդամսին։ Իբրեւ՝ է նա-
խադրութեան։ Զգլուխ՝ է խնդիր իբրեւին. եւ սա հանդերձ
խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր նոյ. զի մե-
ծին եւ առաջնոյն. եւ կամ պատահական խնդիր բայիս՝ է։

Յելսորդ համարն, Լոն է շաղկապ։ Գործ՝ է անուն բայի։ Յարմարեալ՝ է բայ։ Ինդ՝ է նախադրութիւն։ Լին՝ է խնդիր նոր. որ և հանդերձ խնդրո

զեղանիւն ուծայնին ընորհաց 'ի քեզ անսպառ, և զշարժիլն՝ ՝ի զիջանելն հոգւոյն 'ի վերՁ մտաց քոց անդադար։ Յերկրորդ համարն, անուն բային դնի զօրութիւն. ՝ի՝ է։ Նկալեալ՝ է բայ. (կամ որ նոյն է՝ ընդունելութիւն եղեալ՝ իբր գրադիմ բայ)։ Ծանօթութիւն՝ է խնդիր սեռի բայիս ընկալեալ։ Հոգեւոր՝ է յատկացուցիչ ծանօթութեան։ Յառաջիկան՝ է նախադրութիւն. որոյ խնդիրն զօրութիւն դնի՝ ԸՁ բառիՁդ՝ պնարհոյդ. ՝ի՝ է՝ զծանօթութիւն. որոյ լեալ է յատկացուցիչ բառդ պնարհոյդ. ոչ թէ ասէր, յառաջ քան զծանօթութիւն մարմնոյդ՝ ընկալեալ զծանօթութիւն հոգւոյդ։

Յերրորդ համարն, Ոչն յարաբերէ զվերջին բառն առաջին համարոյն՝ որ է բառդ՝ խնդրոյս. և է լեալ անուն բայիս սիրելի է։ Բառդ՝ էսոյ էսկ ախորժակաց, առաւել ևս սովորութեան՝ են խնդիր նՁ. ՝ի՝ է բայիս՝ սիրելի է։ ուր՝ էսկն դնի իբր զարդ. իսկ էսոյն է ածական ախորժակաց։ Առաւել ևս՝ շաղկապ առաւելական. ոչ թէ ասէր. այդ խնդիրդ սիրելի է ախորժակացս իմոց, և առաւել ևս սովորութեանս։

ԳԼՈՒԽ. ԼԴ։

Յաղագս Յարմարագրութեան։

Յարմարագրութիւն է ուղիղ գրութիւն բառից 'ի ձեռն յատուկ տառից, և պատշաՁ կարդումն բանից 'ի ձեռն յարմար կետից և նշանաց։ Լուսոյ երկու պաշտօնք են յարմարագրութիւն։

Առաջինն է՝ զիւրաքանչիւր բառ գրել իւր սեփական տառիւ. ՁՐ, Նօթ, և ոչ անօթ. գոհար, և ոչ հոհար. թանձր, և ոչ դանդր. ըստ այսմ և այլքն. զորոց ոչ է հարկ գրել յերկար. ապա թէ ոչ՝ պարտ էր զնՁմ բառ ներգործուՁ դնել աստ։ Իսկ եԹէ կամիս Ձամի ասցս տեղեակ լինել, պիտոյ է քեզ պարապել ընԹերցման գրոց, և քննուՁ բառից. ևևս հայել յաՁախ 'ի բառգիրքն, ուր որոշ եղեալ կան իւրաքանչիւր բառք ԸՁ բառն տառից իւրեանց։

Երկրորդ պաշտօն յարմարագրութիւն է՝ զիւրաքանչիւր բան ուղիղ և որոշ կարդել, թէ ԸՁ բառիցն, և թէ ԸՁ

հատուածոյ բանիցն . թէ՞ ը պարբերուն , և թէ ըստ
տրոհուն : Իսկ այս լինի՝ ի ձեռն կետադրուն , նշանա-
դրուն և զատուածադրուն . զորոց խօսեսցուք կարգաւ :

Գ՝ասն կետադրութեան :

Կետադրութիւն է ուղիղ կարգումն բառից և բանից՝ ի
ձեռն կետից : Իսկ կետքն են գիծք ինչ որոշիչք հատ-
ուածոց բանից , և կարգի բառից . և են երեք :
Առաջինն անուանի ստորակէտ . և է այս (,) և դնի
սա հասարակօրէն՝ ի վերջ անկատար բանից . և կամ
այնպիսեաց՝ որ թէպէտ յինքեանս համարին կատարեալ,
բայց համեմատութիւն այլում բանի՝ որոյ են հատուած,
են իբր անկատար : Սա լինի և մակակէտ ենի տառին,
յորժամ իբր նախադիր վարի . որ , ՝ի տուն . ՝ի տան . ՝ի
տանէ , ևն : Երկրորդն ասի միջակէտ . և է այս (.) և
դնի սա՝ ի վերջ այնպիսի բանից , որ թէպէտև են կա-
տարեալ , բայց դեռևս չեն վերջացեալ . յորոց և հա-
զիւ երբեք սկսանի գլխագրով այլ բան :
Իսկ երրորդն ասի վերջակէտ , որ է այս (:) և սա դնի
՝ի վախճան կատարեալ բանից վերջացելոց . յորոց հա-
սարակօրէն գլխագրով , կամ երկաթագրով սկսանի այլ
բան : Եւ ահա երեքին սոքա յայտնի երևին յառաջիկայ
օրինակդ :
*Որք վիրաւորին՝ ի պատերազմի ասա մերում, դեղնի
ապաշխարութիւն է . զոր դնեն՝ ի վերայ իւրեանց,
և ողջանան ‖ . ՄԾԲ . ՃԽԱ . Է :
Արդ նկատել արժան է , զի յորժամ բիւր անուանք
կամ բայք աւելի քան զերկուս՝ անմիջապէս շարայարին
զկետ միմեանց , եթէ նախընթաց նոցին դիցի առանց
շաղկապիս և , հասարակօրէն դնի՝ ի միջի ստորակէտ
կամ գոնէ բուութ . որ , *Յորամանկ , մեքենաւոր և
արուեստական է ախոյեանն մեր . բայց զէն նոր տիա-
ռադոյն է քան զմերն ‖ . ՄԾԲ . Է :
Ասացի՝ աւելի քան զերկուս . զի եթէ երկու միայն ի-
ցեն , ոչ է հարկաւոր դնել զստորակէտ , այլ՝ ոչինչ , և
կամ առ առաւելն՝ զբուութ . որ , *Յաղային դնայնն այ-
նուհետև՝ ՝ի վերայ պահակին հոնաց , զոր ունէին բրա-
նուք պարսիկք . առնուին՝ քանդեին զպահակն ‖ . եղիշ . Գ :

*Որք

*Նրբ եցե, զի ելից 'ի թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս ‖ . եղէզ . Ը ։

Իսկ եթէ շաղկապաւս Ա յարեսցին, թէ երկու եցեն՝ և թէ աւելի, ոչ է հարկ դնել զստորակէտ, այլ կամ զբուռթ, և կ զոչինչ. ՊՐ, *Արկներ և երեքկներ զանսուտ երդումն ‖ . եղէզ . Է ։

*Ամ գնացից և վարուց և իրաց՝ 'ի չափու պարտ է կալ, և ոչ խոտորել՝ ոչ յաջ և ոչ յահեակ ‖ . Նար . երգ ։

Այլ եթէ յայսպիսի շարայարեալ շաղկապաւոր բառսդ յարեսցին այլ բառք իբր բացայայտիչք, կամ իբր յատկացուցիչք, կ իբր ածականք, կամ իբր խնդիրք Ա, յայնժամ դնի ստորակէտ, կ բուռթ . ՊՐ, *Յարգեն զՇՀառուն, և պարսաւեն զյսջողՇածս . Ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորաւն այպանեն յոյժ . սիրեն զանշքուն հանդերձից, և յարգեն զանարդն քան զպատուական . գովեն զմահ, և պարսաւեն զկեանս ‖ . եղէզ . Ը ։

Այս ևս արժան է նկատել, զի 'ի բանս յորժամ յարին զինչ և իցե շաղկապք, պարտ է ըստ պահանջելոյ շաղկապման բառից և բանից դնել զկէտ . որոց զօրինակն կարես գտանել կարգաւ յառաջին մասին . գլ . Է ։

Այդ՝ ոմն հարկ է քերթողին 'ի շարադրելն ինչ՝ 'ի կիր առնուլ զայսոսիկ կէտս Ա յարմարուն տեղւոյն, սոյնպէս ևս հարկ է ընթերցողին կամ խօսողին կշռել զիւրաքանչիւր անգամ և զպարբերութիւն խօսից, և տրոհմամբ բանից 'ի ձեռն շնչառութեան արտասանել . 'ի ըստորակէտս՝ զխոնարհուն ձայնին կախ թողլով՝ իբր կատարելի . 'ի միջակէտս՝ զձայնն հատանելով՝ իբր Ա իմիք կատարեալ . և 'ի վերջակէտս՝ զձայնն և զբանն վերջացուցանելով՝ իբր ամենևին աւարտեալ ։

Զատանին դարձեալ՝ և այլ երկու տեսակք գծից, որք երբեմն 'ի գործ ածին 'ի շարադրութիւս . որոց մինն ասի, ֆաբենհայիշ, կամ ֆակգիծ . և է այս . ( ) . և սա 'ի մէջ բանի զմասնաւոր բան ինչ և կամ բառ պարագրէ . մինչև առանց ընթեռնլոյ զայն, ամենայն միաբանի մացուՇածոյ միւս բանին, յորոյ միջի զետեղեալ կայ . զոր օրինակ, * Լուցուք՝ (թէ ախորժէք), նախ զօրէնս այ 'ի ձեռս մեր, և ընթերցցուք ‖ . Լամբ . ասէն ։

Ուր ահա այս բան՝ ընդ ախորժելի՝ որոշեալ է փակագծիւն. առանց որոյ կարէ իմացուցեալ միւս բանին մնալ ամ բողջ. որպէս, առցուք նախ զորինս այ՝ ի ձեռս մեր,

և ընթերցցուք.

Երկրորդն ասի ենթամնայ. և է այս՝. և սա զերկուս տարակաց վանկս միոյ բառի յարէ՝ ի մի։ Եւ այս յայն ժամ լինի, յորժամ մի վանկ բառին է՝ ի վերջն նախ ընթաց տողին, և միւսն՝ ի սկիզբն յաջորդ տողին. ոչ է տեսանել՝ ի սոսին. * Ոչ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի։ սարգ. Է. պնդ. 5։ * Լուեալ՝ է՝ ի վերջ տողին եկրդեալ. այլ միայն զմերս զարտուղի և անդամն մաս՝ ցընթացս այսուհետև փոքր ինչ քննեալ։ լամբ. պարտ։

Այլ նկատեալ պարտ է, զի մի՝ վանկքն թիւր անջատեսցին՝ ի վերջս տողից, այլ՝ ըստ պահանջմանն փաղաւուրթեն. ուստի և այնպիսի վանկք՝ որք բաղաձայնիւ սկսանին, յանջատիցն՝ բաղաձայն նոցա՝ ոչ է դնելի՝ ի վերջն տողից, այլ՝ ի սկիզբն յաջորդ տողին։ Այդ թիւր է այս անջատումն՝ թագաւորել. տես ի. գնաց աք. երկեւանկիւն. լաւութիւն. փառակցին. ՚ՁԲ։ Այլ պարտ է դնել այսպէս, թագաւորել, կամ թագաւորել. տես ի. գնաց աք. երկեւանկիւն. լաւութիւն. փառակցին. ՚ՁԲ. Այդպէս ևս յայնպիսի բառս՝ յորս ոչ տառն իբրև վերջ հնչէ, ոչ է պարտ անջատել այսպէս՝ ստեղծ՝ ուած. պատ՝ ուել. ՚ի նախանձուել. լուանալ։ ՚ՁԲ. այլ՝ այսպէս. ստեղծուած. պատուել. ՚ի նախանձուել. լուանալ։ ՚ՁԲ։

Այլ եթէ երկու ձայնաւորք մի զկնի միոյ դիպեսցին, պարտ է զմին՝ ի վերջ նախընթաց տողին դնել, և զմիւսն՝ ի սկիզբն յաջորդ տողին. զոր օրինակ, բաղաամ. մարիամ. մի այն. գաբրիել. էմմանուել. առնելին. լնուլին. սիմէոն. էակ. կոյաք. մնայաք. բայլոյ. քոյլին. գոյլուք։ ՚ՁԲ։

Որքան եթէ զկնի ունիցին զայլ վանկ, այլազգ ևս բաժանին. որպէս, բաղաամ. մարիամ. գաբրիել. էաւկան. միայնակ։ ՚ՁԲ։

Եւ ևս յայնպիսի բառս՝ յորս էն տառն զորութիւն է եղեալ, յանջատելն զայնս՝ ելեն իբր՝ ի բաղումն դնի ներգործուէ. ՚ՁԲ, փրկ՝ տութի. գընել. զընել. ըս

կաս

կանոնիլ. զգնա. ՃԾ։

Ա.յլ գիտելի է. զի բառք բարդեալք և բաղադրեալք առանց միջանկեալ տառի՝ այլազգ անջատին. ՅՍկզբնաւորութիւն պարզիցն՝ յորոց զօդին, թէև ձայնաւոր տառիւ սկսեսցին. որ, ուրախ. արար. գժուար. իմաց. պարառուի. բաց. որոշել. դերանուն. ապերախտ, ՃԾ։ Իսկ որք միջանկեալ տառիւ բարդին, սկզբնաւորութիւն բաղաձայնից անջատին. զոր օրինակ, Ճառագանել. կենագործել. ՃԾ։

Ի ասն նշանագրութեան։

Ի բարբառս մեր կան նշանք ինչ, որովք յատկութիւնք հնչմանց տառիցն որոշին 'ի ձեռն արուեստի առագանուն ըստ ոլորակին, ըստ հագագին՝ և ըստ ամանակին. և են եօթն, ասել, որ է այս՞. առաջ, որ է այս օ. Ռա՜, որ է այս՞. Բռա՜, որ է այս՞. Ղեղ, որ է այս՞. Երկար, որ է այս՞. պարոյկ, որ է այս։ Ինդ որս դասի և ոլորակն, որ նման է պարոյկի, և կոչի Ենս երբեմն պարոյկ, որ և է այս՞։

Սոքա անուանին ևս՝ սոսկանշան. սղանշան. թաւանշան. բթանշան. շեշտանշան. երկարանշան. պարոյկանշան. և ոլորակաձև։ զորոց եթէ կամիս տեղեկանալ, տես 'ի քերականաց թէ հօր մերոյ ամենապատիւ մխիթարայ աբբայի, նաև 'ի հին քերակինուցիս։ Այլ քանզի սոքա 'ի գործ ածին նաև 'ի շարագրութիս՝ առ 'ի կարգաւ զետեղել և որոշել զբառս և զեղանակ բանից, ըստ այդմ ունիմք սասս խօսել զսոցանէ, 'ի բաց թողեալ զսոսկն և զսուղն, զի սոքին 'ի չափմունս ստից միայն են պիտանացու։

Թ.աւն 'ի գործ ածի 'ի գրուածս 'ի վրէ ասէնին միայն, յորժամ ասէանն իբրև վերհնչէ՝ զկնի ձայնաւոր տառիցս՝ է, և ո. ՃԾ, Ինչիւ. թիւ. անուանք. թուոց. շինուածք. պատուել. ՃԾ։ Իսկ եթէ զկնի այլոց տառիցս յարելով հնչեսցէ իբր վերհ, ոչ երևի հարկաւոր ներգործութիւն դնել զթաւ. զի յայնժամ ինքնին յայտնէ զհնչումն իւր. ՃԾ, ի՝ տաւ. կանխաւ. մանաւանդ. աւեստիք. դաւիթ. եւայ. դեւ. սիրելւոյ. մատնւոյ. հոգւոյ. բարւոք. ՃԾ։

Լուսնեն դնի նախ՝ 'ի վեր Թուականն անուանց դասա-
կանաց, յորժամ վարին իբր մակբայ. և կամ յոր-
ժամ ունիցին զյօդ առանց լինելոյ խնդիր բայի, և
կամ ածական. որ, * Լսորհեալ եմք նոյնպէս ծառայել
քեզ միամտութեամբ. եթէ հաստատեսցես առ մեզ դա-
շամբք զերիսս զայսոսիկ. առաջին՝ չսիրել զյանցանս
մեր... երկրորդ՝ զի դարձուսցես մեզ զամ՝ ժառան-
գուիս մեր... երրորդ՝ հնարել թափել զմեզ 'ի կայ-
սերէ ॥. խոր. Գ. 48։

Երկրորդ՝ դնի բուսթ 'ի վեր շաղկապիցս՝ այլ. դար-
ձեալ. արդ. և արդ. իսկ արդ. այլ արդ, ևն. որ, * Ա-
եթէ զամ ինչ՝ զոր խորհեսցի մարդ՝ առնել կարօղ է,
այլ՝ զորս թողացուցանէ ածՍ ॥. Վարդ հարց. Ը։

* Դարձեալ՝ եթէ 'ի նաւ ելեալ օր՝ Ը ամենի ալիս կա-
միցի ճանապարհորդել ॥. Խոսրով. Ժդ. 1։

* Եւ արդ՝ հայեաց յերկինս 'ի վեր ով մարդ, և յեր-
կիր 'ի խոնարհ ॥. սարգ. ա. պեռ. Ը. յորդ։

Երրորդ՝ դնի բուսթ 'ի վեր դրադէմ բանից՝ 'ի լինել
հեռի դիմաւոր բային. մերթ ևս 'ի մօտ լինելն. որ.
* Արդ՝ եր վեր զկերպարանս ծառայութեան թողեալ՝ գա-
ռաւոր և քննիչ նստիս օրէնսդրին ॥. սարգ. յոկ. Ը։
* Օ ոճարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ
մատուցեալ՝ տային պտսխնի թագրին ॥. Եղիշէ. Ը։

Նոյնպէս ևս եթէ դրադէմն յետադասեալ լիցէ, պար-
է դնել զբուսթ 'ի վերջ նախընթաց բանին. թէպէտ
յայսպիսիս երբեմն ստորակէտ ևս դնի. զոր օրինակ,
* Արդեօք մտից 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ
քեզ առաջնորդեալ ॥. Նարեկացի. 'ի բանն. Ե։
* Օ նոյնս և ես հանդերձ հառաջմամբ բարբառիմ՝ 'ի
դիպուոճածոց աստի վտանգեալ ॥. յովհաննէս Իմաստ. ա.

Չորրորդ՝ բուսթն դնի երբեմն 'ի վեր այնպիսի բառի,
ևս, յորս կարեր դնիլ ստորակէտ. որ, * Որ խոնարհն
խոնարհեցուցանէ զդեպս. և որ ոչ խոնարհի՝ խոնարհն
'ի դիւաց ॥. Լամբրոնացի. 'ի Մեկն. սաղ. ՃԺԸ։
* Ա՝ի որ՝ որ չար լիցէ՝ յուսասցի անպարտ լինել ॥. յոբ. ԺԲ. Ը։

Հինգերորդ դնի նախ՝ 'ի վերջ հրամայական բայից. որ.
* Արձանացիր 'ի յոյսն, մինչդեռ ժամանակ 'ի
ձեռս է. մատիր առ սրբոյն աղաւոր, մինչդեռ 'ի

ընորհացն յաւիտեան է. հաւատամ գտանել ընորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան ॥ . լամբրոն . աղօթ։

Բայց եթէ հրամայական բայն ունիցի յառաջ քան զինքքն զայնպիսի բառ, ընդ որում 'ի միասին վարի, յայնժամ դնելի է շեշտն 'ի վերջ նախընթաց բառին . գր, * Յամենայն իրաց ջարաց 'ի բաց կացէք ॥ . ա . Թեսաղ . է . 16։ * Բաջ իմա զբանն, եթէ չգոյ այլ ջար քան զայն ॥ . խոսրով։

* Դուք բուռն հարէք, և ոչ լիցի դործիկից ॥ . լամբ . պատ։

Այս ևս՝ եթէ հրամայականն ունիցի նախ քան զինքն զարդական մասնիկ՝ ոչ, թէ առ ընթեր՝ և թէ հեռի, յայնժամ զշեշտն պարտ է դնել միայն 'ի վերջ արգելական մասնկան . գր, * Յիմաստութիւն քո մի՛ հպարտանար...մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո ॥ . առակ . գ . 5։

Այրբեմն ևս վ՚ զգուշութեամբ՝ դնի շեշտ 'ի վերջ անուանական, որք էական բայիւ վարին, կամ որք էական բայիւ ուղղական կամ սեռական խնդիր լինին . զոր օրինակ,

* Պատահ եմ՝ 'ի ձեզ ողորմութեամբ ॥ . է . Թեսաղ . գ . 4։

* Լաւ է անդաւակուն հանդերձ քաջութեամբ ॥ . եմոսթ . ե . 1։

* Իմաստանոց է վերակացու լինելն ॥ . եպիսկոպոս . շ . 39։

Այրկրորդ՝ դնի շեշտ 'ի վերջ առաջնոյ վանկի 'ի կոչական անուանս, յորժամ առանձինն վարին . զի թէպէտ 'ի մեր լեզու ոչ եմ բառք 'ի վերջին վանկն շեշտին, բայց 'ի կոչականս՝ յառաջինն . գր, * Յուդա՝ համբուրեալով մատնես զորդի մարդոյ ॥ . ղուկ . իբ . 48։

* Որդեակ զօրէնս իմ մի՛ մոռանար ॥ . առակ . գ . 1։

Ասացի՝ յորժամ առանձինն վարին . զի եթէ կրկնեսցին, շեշտն ըստ հաճութեան դնի . Այրբեմն 'ի վերջին վանկն . գր, * Սողոմն՝ սողոմն գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանեալ զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան ॥ . խոր . է . 12։

Իսկ երբեմն յառաջին վանկն . գր, * Դանիել՝ դանիել արի՛ առ ոչխարդ ॥ . դան . ծբ . 36։

Այս ևս եթէ կոչական անուանք վարեսցին մասնկամբքս՝ և՝ ՝ՀՎ, ՝ՇՄ որում են կոչականակերտք, շեշտն դնի 'ի վերջ այնց մասնկանց . գր, * Մանչ եղերուք ո՛ հովիւք առաջին հովհաճոյն արդարոց ॥ . ՄԾԲ . Ճ։

Իսկ եթէ կոչական անուանն զկնի կամ առաջի իւր ունի-

ցի զայլ անուն, կամ զդերանուն, ԼԱ. շեշտն դնի 'ի վերջին վանկինն նախընթացին • ՊԲ, * Սիմոն յոփանաս՝ սիրես զիս առաւել քան զդոսա ։ Յովհ • Խ • 15։

* Ծագեա՛ 'ի յիս զլոյս քաւութեան արքայ երկնաւոր ։ Նարեկացի • 'ի Բանն • ԺԸ։

Եւ ևս եթէ կոչականքն միոյ՝ իցեն բազմք առանձինն առանձինն, շեշտն դնի 'ի վերջին վանկն • ՊԲ, * Ցուցիչ պարգևաց, ինքնաբուն բարի • • • փառաւորեալ • անքննին • անեղ • ահարկու • սոսկալի • հզօր • սաստիկ • անտանելի • անմերձենալի • անրմբռնելի • ԼԱ ։ Նար • Գ։

Երրորդ՝ դնի շեշտ երբեմն 'ի վերջ ոմանց բացատական և ստորատական մակբայից • և 'ի վերջ բառիս՝ էջ • մերթ ևս 'ի վերջ բառիցս՝ սա, դա, նա, յորժամ վարին էական բայիւ • զոր օրինակ, * Ոչ նախանձի խաւար ի աղջամուղջ ։ Մծբ • Ի։

* Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ ։ Մտթ • Իե • 12։

* Ոչ ի ակնառութիւն առաջի նայ ։ Հռոմ • Գ • 25։

Երբեմն ևս մարթ է դնել շեշտ փոխանակ ոլորակի 'ի վերջ հարցական բառիս՝ ըստ պահանջմանն տեղւոյն, զոր օրինակ, * Փութացաւ ուսանել՝ թէ քանի իցեն պարագլուխք քաջ նահատակացն • • • զինչ անուանք իւրաքանչիւր համնազարացն իցեն • • • ո՞ ոք 'ի նոցանէ յերկեցայս կայցէ • և կամ՝ ո՞ զանձն 'ի մահ դնելոյ զուն գործիցէ ։ Եղիշէ • Ը։

Սոյնպէս է և 'ի բառսդ • գէթ, գոնէ, և գոնեայ • ՊԲ,

* Ոչ եմ արժանի գոնէ զհովանին պետրոսի տեսանել թողթեթէ զնա իսկ գլխովին ։ Սարգ • Ա • պեպ • ԺԲ • Վերջ։

* Ակնայք եղբարք գոնեայ անդ ան և մեք զանձինս աշխարհեսցուք ։ Լամբ • 'ի Մեկն • պապ։

Երկարն 'ի գործ ածի 'ի բանս հեգնականս, ողբականս, ցաւակցականս, զարմացականս • ԼԱ • զոր օրինակ • * Ա՜հ՝ որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցո՛ զքեզ ։ Մտթ • Իէ • 40։

* Մեղա՜յ մեծիդ բարերարութեանդ, անարգս մեղայ ։ Նար • Իէ։

* Ողորմի՛ մ ողորմիս սիրելեաց ձերոց, և բաղում ամ գամ ողորմիս անձանց ձերոց ։ Եղիշէ Վեր • Գ։

Ա՛յլ յայսպիսիս՝ հնար է և փոքր երկարի դնել շեշտ, մերթ ևս պարոյկ, և կիսոչինչ, ի առոգանելոյ բանին

Պարոյկն եւս դնի յայնպիսի բանս՝ ՚Ը որում յայտնէ զկիրս հոգւոյն. ոմանք են այն բանք՝ որք հասարակօրէն ՚ի ձեռն միջարկութեաց առաջի դնին. զորոց զօրինական կարեւ տեսանել յառաջին մասին. գլ. Խ։

Ողորակն՝ որ նմանութիւն ինչ ունի ՚Ը պարոյկին, մանաւանդ թէ՝ երբեմն պարոյկ եւս կոչի, դնի ՚Լակ՝ ՚ի վերայ հարցական մակբայից. ՚Ր, * Օ՞ի բնաւ պիտոյ են մեզ անցաւոր կեանքս ॥. եղիշէ վրդ. Է։

Երկրորդ՝ դնի ՚ի վերայ հարցական անուանց. զորոց զօրինական տես ՚ի գլ. Լ։

Երրորդ՝ դնի ՚ի հարցական բանս՝ ՚ի վերայ այնր բառի, որով հարցումն յայտնի. ՚Ր, * Երկայնամիտ միայն լինիցի առ նոսա ॥. ղուկ. ԺԸ. 7։

* Տեսանիցք, զի ՚ի գործոց արդարանայ մարդ, և ոչ ՚ի հաւատոց ॥. յակ. Բ. 24։

Այնպէս եւս եթէ ՚ի հարցական բանս դիցի մակբայ երկբայական փոխակ հարցականի, ոլորակն դնի ՚ի վերայ այնր բառի, որով ՚ի մէջ բերի հարցումն. և ոչ ՚ի վերայ մակբային. զոր օրինակ. * Մ՚ի թէ տկարանայցէ առ ՚ի յոյ բան ॥. Ցոան. ԺԸ։

* Արդեօք տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութիւն ॥. Նարեկացի. ՚ի բանն. Բ։

Արյլգիտելի է, զի քիշմ անգամ ՚ի տեղի ոլորակին դնի պարոյկ. և ՚ի տեղի պարոյկին՝ ոլորակ. և երբեմն եւս ՚ի տեղի երկարին՝ ոլորակ, կամ պարոյկ. եւս և շեշտ. և ՚ի տեղի ոլորակին կամ պարոյկին՝ երկար, ըստ առոգանելոյ զբանն, ոմն և յիշեցաք ՚ի վերոյ։

Ա՝ ասն պարտնհարդրութեանէ։

Զ՝տանին և այլ չորս գիծք, որք կոչին տեսակք պատուհադրութեան. որոց առաջինն ասի պետ. և է այս, ,։ և սա միայն փոխան այլոց դնի ՚ի մէջ միոյ բառի. ոչ ՚ի սկզբան, և ոչ ՚ի վերջոյ, այլ՝ ՚ի միջի. ՚Ր, քուզամնչեմ. Ճշակեմ. բովնդակեմ. ՚Ն։ Արյլ զայս չէ պարտ յաՃախսել, բայց եթէ հարկն ստիպեսցէ ՚ի կարդելզատոյն բանից։

Երկրորդն ասի էրիորեակ. և է այս ,"։ և սա դնի նախ՝ ՚ի վերայ բառի փոխան ձայնաւորս տառի եղելոյ ՚ի մէջ բա-

բառին. ԿԲ, խ"ն"ՐՀՈՒԼԻ. ս"վ"ԲԵԱԼ. ԼԵ։ Ա՛ՅԼ բարուք
եւս է յայսպիսի տեղիս բնաւ ոչ առնուլ 'ի կիր զայս
նշան։ Ղ՝նի երկրորդ՝ 'ի վերջ կիսատ բառից ինչ՝, զորս
հնար լցեալ ընթերցողին իմանալ. զոր օրինակ, զուկ".
յովհ". լամբ". ԼԵ. այսինքն զուկաս. յովհաննէս. լամ-
բրոնացի. և այլն։

Ա՛ՐՐՈՐԴՆ ասի դոռ, որ և սպատեաւ կոչի, երբեմն եւս
քաշ. և է այս, ՝ ։ և սա դնի 'ի վերջ բառի՝ երբեմն փո-
խանն ձայնաւոր և բաղաձայն տառից ինչ այնր բառի.
զոր օրինակ, ՇԾ. ՇՄ. ԵԷՄ. ԻԷԼ. ԷՐԴ. ՀԷ.
ԽՀԴ. ԺՄԿ. ՓԽԿ. ԼԵ։ Իսկ երբեմն փոխան ձայնաւոր
տառից միայն, մանաւանդ փոխանակ այբի. ԳԲ, քէնդ-
պՇՇՀ. ՍՀՄՆ. ՍԿԼ. ԲՇՄ. պրՇՇԼ. խՆՐՀՈՒԼԻ. ԺՂՄԲՐ.
և այլն։

Ղորրորդն ասի Ղանոգիր. որ դնի փոխանակ միոյ ամ-
բողջ բառի. և սՐ են կրկին տեսակք։ Ամանք կազմին
'ի բաղադրութէ դրոց. որպիսի են սոքին.

ՅՇ,	այսինքն.	ԸՍ,	ըստ.	ԿՄ,	կամ.
ԳԲ,	զոր օրինակ.	ԸՍՄ,	ըստ այնմ.	ՔՆ,	քան.
ԸՆԴ,	ընդ.	ԼԵ,	և այլն.	ՍՏ,	այսպէս. ԼԵ։

Իսկ ոմանք կազմին յայնպիսի գծից, որք ոչ դասին ընդ
գիրս լեզուի մերոյ. որպիսի են սոքին. Ց. աշխարհ.
Ղ լուսին. Ж աստղ. և այլն։

Ա՛ՅՀԱՒ ինչ շատ լցեալ առ 'ի յուսումն ուղիղ խօսելոյ ընդ
մարդիկ և անսխալ շարադրելոյ։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ։

Յորում առաջի դնին սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի. և կանոնք համանձայնուն նոցա ընդ միմեանս։

ԳԼՈՒԽ Ա։

Թէ ինչ է գեր։ Գերական։ և ոչ է գեղեցիկ գլխաւոր ուսանելիք 'ի նմա։

Գերականունն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ։

Գլխաւոր ուսանելիք 'ի գերականուն՝ են չորք. գիր, վանկ, բառ, և բան։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի։ Իսկ տառն է հընչելումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի՝ այլում հնչման, և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զբաղադրեալ ձայն։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բերան մարդոյ՝ բաղկացուցեալ ձայնաւորաց և բաղաձայնաց։ ՝ որոգոն, * մա. զէն. ՝ ՝ ։

Բառն է ձայն նշանական. ՝ այնպիսի ձայն, որ կարգեալ է 'ի նշանակել ինչ։ Այս բաժանի յութն ազգս. որք են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն։

Բանն է շարամանուն բառից՝ յայտնող արամախոհութեան մտաց։ Այս է կրկին. կատարեալ, և անկատար։

Կատարեալն է, որ անթերի յայտնէ զդատումնս մտաց. ՝ ՝, * Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ ॥։

Իսկ անկատարն է, որ տայ զսկզբնաւորութիւն՝ զիմանալոյ զդատումնս մտաց, բայց ոչ աւարտէ. ՝ ՝, * եթէ անսայցես ॥. յոր թէ յարեսցի բայ ինչ, կատարի. ՝ ՝, * եթէ անսայցես, աղերսեմ ॥։

Մասունք բանի են ութն ազգ բառից. անուն, դեր,

անուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակ-
բայ, շաղկապ, և միջարկութիւն ։

Յաղագս անուանն ։

Անուանն է մասն բանի, որով իրն յորջորջի. այն է՝ այն-
պիսի բառ, որով իրն ասի այս ինչ ։ Այլ որ զեռն
իրին նշանակէ. զոր օրինակ, * Ծառ. լոյս. երկիր. զ-
ջար. և այլն ։

Անունն բաժանի յերիս, 'ի գոյականն և յածականն.
Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակի
զիրս էականս, կամ իբր էականս. զոր, * մարդ. հաց.
սեր. օրհնութիւն. և այլն ։ Այլ բաժանի, 'ի յատուկ,
'ի հաւաքական, և 'ի յընդհանուր ։

Յատուկն է, որ կարգեալ է՝ զմիոջէ միայն ասել. զոր,
* Մովսէս. սիոն. Նեղոս. և այլն ։

Հաւաքականն է, որ զհաւաքեալ իրս իբրև զմի նշանակի.
զոր օրինակ, * գունդ. ժողով. շեղջ. և այլն ։

Ընդհանուրն է, որ զհասարակ ինչ բազմաց՝ նշանա-
կէ. զոր, * Ծաղիկ. գլուխ. բարուք. և։

Ածական անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս, այլ
պահանջէ յարիլ 'ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսու-
նց. զոր, քաղցր. դառն. բաղում. սակաւ. մեծ. փոքր.
անզգամ. արդար. և։ որք յարելով 'ի գոյականս վա-
բին. օրդն, * քաղցր ջուր. դառն պտուղ. բազում
աշխատանք. սակաւ ժամանակ. և։

Այլ սոքա բազում անգամ զօրուքն ունին զգոյականն.
զոր, * մեծն 'ի փոքուն Ճանաչի ॥ . յր մեծ իրն 'ի փոքու-
իրի ։ * անզգամն անգոսնէ զխրատ հօր ॥ . յր այր անըզ-
գամ ։ * աղբիւր կենաց յոյ՝ բերան արդարոյ ॥ . յր բե-
րան առն արդարոյ ։

Ածական անունն բաժանի յերիս, 'ի դրական, 'ի բաղ-
դատական, և 'ի գերադրական ։

Դրականն է, որ ցուցանէ զորպիսուն կամ զորքանուն
իրին պարզապէս՝ առանց Ճոխացուցանելոյ, կամ նուա-
զեցուցանելոյ. զոր օրինակ, * բարձր. խոնարհ. աղտ-
ղի. պայծառ. սուրբ. մաքուր. վեհ. զօրաւոր. և։

Բաղդատականն է, որ բաղդատելով զմի իր ընդ այլում
իրի՝ ցուցանէ զորպիսուն նորին առաւելեալ կամ նուա-
զեալ

ղեալ քան զմիւսոյն. որ, * բարձրագոյն. խոնարհագոյն. ևն։ կամ, * ևս աղտեղի. ևս պայծառ. ևն։ Դերադրականն է, որ ցուցանէ զօրպիսութիւն իրին յոյժ առաւելեալ կամ յոյժ նուազեալ քան զայլոցն. որ, * Ամենասքանչ. ամենամաքուր. ևն։ կամ, * ևս վերագոյն. ևս զօրաւորագոյն. ևն.

Յաղագս պարագայիցն անուանց։

Պարագայք անուանց են այնք, որք յանուանս մատչին՝ իբր հետևումն որպիսութեանն. և են վեց, սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով, և հոլովումն։

Սեռք անուանց են որոշմունք գոյական անուանց ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց։ Այս են չորս. արական, իգական, հասարակ, և չեզոքական։

Արականն է, որ նշանակէ զարու. որ, * գրիգոր. աբգար. հայր. քեռի. ցուլ. քաղ. ևն։

Իգականն է. որ նշանակէ զէգ. որ, * եսթեր. հեղինէ. մայր. հանի. կով. մաքի. ևն։

Հասարակն է, որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ. որ, * զաւակ. կորիւն. ձի. արջ. ևն.

Չեզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. որ, * հուր. այգի. մատն. մեծուն. ևն։

Ձևք անուանց են որպիսութիւնք նոցա՝ ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան։ Ուստի և անուանք ըստ ձևոյն երեք են. պարզ, բարդ, և բաղադրեալ։

Պարզ անունն է, որ ոչ է զօդեալ ըստ այլոյ մի նշանակական բառի, այլ կայ յինքեան միայնակ. որ, * լոյս. բարի, գօտի. քան. լի. ձեռն. աղօթք. արիւն. ևն։

Բարդն է, որ յերկուց նշանակական բառից զօդեալ է՝ ի մի անուն. որ, * լուսատու. բարեկրօն. գօտեմարտ. քանեքառն. լիաբլի. ևն։

Ընդ բարդս դասին և քանի մի անուանք, որք յերից բառից զօդին՝ ի մի անուն, և կոչին յարաբարդք. որ, * երեքտասանամեայ. հրաշինապետ. ևն։

Բաղադրեալն է, որ յառաջոյ զօդեալ ունի զանազան մասնիկ ինչ. որ, * անձառ. ապերախտ. ոգեղ. կամաձայն. պարադէպ. ևն։

Տեսակք անուանց են որպիսութիւնք նոցա ըստ նախնական և

ը ածականական նշանակութեան։ Ասատի և անուանք երկու են ըստ տեսակին. նախադաղափար, և ածականական։ Նախադաղափար՝ կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութիւն իւրում, կամ յայնմ որպիսութեան, զոր ինքնին նշանակէ. որ, * աւանդ. բան. հուր. հող. կոյս. միապետ, եւ։

Ածականական անունն է նոյն նախատիպ անունն 'ի ձեռն ածականացակերտ անուշան մասնիկանց 'ի վերջոյ յարելոյ կերպաւորեալ, և ածեալ յայլ ինն եղանակ նշանակութեան. որ, * աւանդութիւն. բանաւոր. հրային. հողեղէն. կուսանոց. միապետական. եւ։

Ամենք յայսպիսի անուանց երբեմն 'ի կրկին մասնիկանց ածանցին, և կոչին կրկնածանցական. որ, * Թագաւորական. աղգականութիւն. եւ։

Թիւք անուանց են միութիւն և բազմաւորութիւն նշանակութեան անուանց ը ձայնին։ Այս են երկու. եղական, և յոգնական. կամ միաւորական, և բազմաւորական։ Եղականն է. որ ը ձայնին զմի իր նշանակէ, որ, * սեղան. բեռն. ատամն. եւ։ Իսկ յոգնականն է, որ ը ձայնին զբազում նշանակէ. որ, * սեղանք. բեռունք. ատամունք. և այլն։

Հոլով անուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն, և կամ յերկոսին միանգամայն. և է տասն. ուղղական. որդւոյն, գործ. սեռական. որդւոյ, գործոյ. եւ։

Հոլովմունք անուանց են պէսպիսութիւք վերջաւորութեանց սեռական և գործական հոլովից. և են քսան. չորեքտասանքն հասարակ, իսկ վեցքն յատուկ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ վեց պարագայիցդ՝ բառսդ՝ է անուն գոյական. ըստ սեռին՝ չէզոքական. ըստ ձևոյն պարզ. ը տեսակին՝ նախատիպ. ը թուոյն՝ եզական. ը հոլովին՝ գործական. և ը հոլովմանն՝ հոլովի ոմն գետ, գետոյ, գետով։

Դարձեալ՝ բառս գլուխաւորեալ՝ է ածական անուն դրական. ը սեռին հասարակ, կամ անսեռ. ըստ ձևոյն բարդ. ըստ տեսակին՝ նախատիպ. ը թուոյն՝ յոգնական. ը հոլովին՝ հայցական. և ը հոլովմանն՝ նախադրիչ եւեթ հոլովի։

Յաղագս դերանուանն։

Դերանունն է մասն բանի, որ փոխանակ անուանն դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի։ Եւ բաժանի 'ի հինգ տեսակս. որք են, էական. ստացական. ցուցական. յարաբերական, և դիմորոշական։

Էականն է, որ գոյականապէս նշանակէ զդէմս իրին. ոմանք են սոքա. * ես. դու. ինքն. իւր, իւրեան։

Ստացականն է, որ ածականապէս նշանակէ զնին որոշեալ դիմաց. որպիսի են սոքա. * իմ. քոյ. մեր. ձեր. իւր, իւրոյ։

Ցուցականն է, որ յանդիման ցուցանէ զնին յերրորդ դէմս ըստ կարգի. ոմանք են սոքա. * սա, դա, նա. այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն։

Յարաբերականն է, որ զօրութիւն յառաջ բերեալ 'ի բանի զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նոր, յոր հոլով և պահանջեսցէ բանն. և է բառս՝ որ։

Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ՝ ա. դ. ն. որք իբր յօդք լինչ յարելով 'ի մասունս բանի՝ որոշեն զդէմս նոցա։

Յաղագս պարագայից դերանուանն։

Պարագայք դերանուանց են հինգ. տեսակ, դէմք, թիւ, հոլով, և հոլովումն։

Տեսակք դերանուանց են երկու, որպէս և անուանցն, նախատիպ՝ և ածանցական։

Նախատիպք են սոքին. * իմ. քոյ. մեր. ձեր. իւր. ինքն. և այլն։

Իսկ ածանցականք են սոքին. * մերոյին. քոյին. ձերոյին. իւրական. ինքնաւոր. ինքնուրեք. ևն։

Դէմք դերանուանց են յայտարարութիւք որոշեալ անձանց. և են երեք. առաջին, երկրորդ, և երրորդ։

Առաջին դէմքն է այն, յորմէ է բանն. զորօրինակ, ես։

Երկրդ դէմքն է այն, առ որ է բանն. զորօրինակ, դու։

Երրդ դէմքն է այն, զորմէ է բանն. զորօրինակ, նա. ինքն։

Եւ երրորդ դէմս վերաբերին և դէմք այլոց դերանուանց, թէ ստացականաց և թէ ցուցականաց. թէպետ 'ի մէջ նոցա ևս դառանի կարգ դիմաց. զի ոմանք

նկատին ըստ առաջին դիմաց , ոմն՝ իմ , մեր , և այլն ։
ոմանք ՝ Երկրորդին , ոմն՝ քոյ , ձեր , և այլն ։ և ոմանք
՝ Երրորդին , ոմն՝ իւր , իւրային , և այլն ։
Թիւք դերանուանց են երկու , եզական և յոգնական ։
Եզականն է՝ որ իբրև զմի իր դիմաւորս նշանակէ ։ ՝ , * ես ։ դու ։ մեր ։ ձեր ։ և այլն ։
Յոգնականն է՝ որ իբրև զբազում դիմաւորս նշանակէ ։ ՝ , * մեք ։ դուք ։ մերք ։ ձերք ։ և այլն ։
Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն մի և նոյն դերանուան յինքեան ։ ՝ , * դու , քո , քեզ , զքեզ , 'ի քէն , զքէն , քև , զքև , 'ի քեզ , ով դու ։
Հոլովմունք դերանուանց են պէսպիսուիք հոլովից նց. ՝ , * ես , իմ ։ դու , քո ։ նա , նորա ։ և այլն ։
Ըստ այսոցիկ վերոյեդեալ հինգ պարագայից՝ բառս էնա՝ է դերանուն էական ։ ըստ տեսակին՝ նախատիպ ։ ՝ դիմին՝ վերաբերի առ առաջինն ։ ՝ Թուոյն՝ եզական ։ ՝ հոլովին՝ գործիական ։ և ՝ հոլովմանն՝ հոլովի , ես , իմ , յինէն , ինև , և այլն ։
Պարձեալ՝ բառս 'ի յէրոյ՝ է դերանուն ստացական ։ ՝ տեսակին՝ նախատիպ ։ ըստ դիմին՝ կարգաւ երկրորդ ։ ՝ Թուոյն՝ յոգնական ։ ՝ հոլովին՝ բացառական ։ և ՝ հոլովմանն՝ հոլովի ոմն՝ իմ , իմոյ , յիմոց , ՝ ։

Յաղագս բայի ։

Բայն է մասն բանի , որ զառս , կամ զկիրս , և կամ զլինելուիս իրաց ՝ ժամանակաւ նշանակէ՝ ՝ որոշեալ դիմաց ։ ՝ , * հեղուս ։ փոխիմ ։ գնամ ։ լինիմ ։ ՝ ։
Բայք բաժանին յերկուս , յեական և յառքական ։
Յականք են , որք նշանակեն զլինելուն իրին ՝ ժամաւ ։ և են չորեքին սք , * եղանիմ ։ լինիմ ։ եմ ։ և գոլ ։
Յակ առքականք են , որք նշանակեն զառնել ինչ՝ կամ զկրել ։ որպիսի են այլ ամ բայք ։ զոր օրինակ , * դրեմ ։ ջեռնում ։ ձգիմ ։ ՝ ։

Յաղագս պարագայից բայի ։

Պարագայք բայից են այնք , որք մտածին 'ի վր բայից իբր հետևմունք որպիսուն նց ։ և են ինն ։ սեռ , ձև , տեսակ , Թիւ , դէմք , ժամանակ , եղանակ , խոնարհմունք ,

մունք, և լծորդութիւնք։

Սեռք բայից են որոշմունք նոցա առից և ըստ կրից. և են չորք. ներգործական, կրաւորական, հասարակ, և չեզոքական։

Ներգործականք են, որք նշանակեն զներգործել իրին առ կրօղն. զոր օրինակ, * այրեմ. վատնեմ. եւ։

Կրաւորականք են, որք նշանակեն զկրել իրին 'ի ներգործողէ. զոր օրինակ, * այրիմ. վատնիմ. եւ։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ նշանակեն զներգործել իրին առ այլ, և մերթ զկրել իրին յայլմէ. զոր օրինակ, * տանիմ. ծնանիմ. եւ։

Չեզոքականք են, որք զներգործութիւն գործողին յինքեան 'ի գործօղն նշանակեն, և ոչ իբր 'ի ներգործողէ առ կրօղ։ Այս են կրկին. ներգործակերպ, և կրաւորակերպ, կամ ձայնակրական։

Ներգործակերպ չեզոքականք են, որք ըստ ներգործական բայից խոնարհին. զոր օրինակ, * դիմեմ. դնամ. զբօսնում. և այլն։

Ձայնակրականք են, որք ըստ կրաւորական բայից խոնարհին. զոր օրինակ, * աշխատիմ. մնանիմ. փախչիմ. և այլն։

Ձևք բայից են որոշմունք նոցա ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան. և են երեք. պարզ, բարդ, և բաղադրեալ։

Պարզն է, որ առանց բարկացութեան ըստ այլում բառի՝ զնշանակութիւն առից և կրից պարզապէս յայտ առնէ. զոր օրինակ, * բերեմ. կիզեմ. և այլն։

Բարդն է, որ զօդեալ ըստ այլում նշանական բառի՝ զկրօղ կին իմացուցածս առից կամ կրից 'ի մէջ բերէ. զոր օրինակ, * ընծայաբերեմ. բոցակիզեմ. և այլն։

Բաղադրեալն է, որ բաղկանայ բաղադրական մասնիկամբք. զոր օրինակ, * խոցոտեմ. անպատուհեմ. պարամերժեմ. պղծատանամ. և այլն։

Տեսակք բայից են որպիսութիւնք նոցա՝ նկատեալք ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան իւրեանց. և են երկու. նախագաղափար, և անցողական։

Նախագաղափարք՝ կամ նախատիպք են, որք նշանակեն միայն զառաջ գործողին. զոր օրինակ, * յառնեմ. լամ.

յենում. պատկառիմ. և այլն։

Ընդոլական են, որք ոչ միայն գործերգործուն առնողին, այլև զգործեալ կրողին նշանակեն. զոր օրինակ, * յարուցանեմ. լացուցանեմ. յեցուցանեմ. պատկառեցուցանեմ. և այլն։

Թիւք բայից մասածին ՝ի եզականուն և ՝ի յոգնականուն։ Եզականն է, որ նշանակէ զմիակի գործողուն, կամ կրելուն միոյ. դր, * վառեմ. վառիմ. և այլն։

Յոգնականն է, որ նշանակէ զբազում գործողուս, կամ կրելուս բազմաց. դր, * վառեմք. վառիմք. ևն։

Դէմք բայից են, որք ցուցանեն զգործողուն լինել որոշեալ անձին. և են երեք. առաջին, երկրդ, և երրդ։

Առաջին դէմքն է այն, որ ցուցանէ զգործողուն այնր, յորմէ է բանն. զոր օրինակ, * տամ. ետու. ևն։

Երկրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողուն այնր, առ որ է բանն. զոր օրինակ, * տաս. ետուր. ևն։

Երրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողուն այնր, զորմէ է բանն. զոր օրինակ, * տայ. ետ. և այլն։

Ժամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ ժամանակի. և են երեք. ներկայ, անցեալ, և ապառնի։

Ընդեալն քառակի նկատի. այ՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար, և իբր գերակատար. և ըստ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց, ներկայ, անկատար, կատարեալ, յարակատար, գերակատար, և ապառնի։

Ընդանակք բայից են պէսպէս սատիճանք կամ կերպք նշանակելոյ ՝ի զառս և զկիրս. և են չորք, սահմանական, հրամայական, ստորադասական, և անորոշ կամ անորոշ։

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի ՝ի զանազան վերջաւորուն, և ՝ի դէմս, և ՝ի ժամանակս, թէ՛ ՝ի եզականին, և թէ ըստ յոգնականին. զոր օրինակ, * պահեմ, պահես, պահէ. պահեմք, պահէք, պահեն. պահէի, պահէիր, ևն։ Այս ամ՝ չափ են, որչափ են փոփոխուելիք մի և նոյն բայի։

Ծորգուելիք բայից են պէսպէսութիւնք վերջաւորութեանց

սահ-

սահմանական ներկային. և են չորք. առաջինն յանդեալ 'ի ԵՄ. զոր օրինակ, գործեմ։ երկրորդն 'ի ԱՄ. ՔՐ, աղամ։ երրորդն 'ի ՈՄ. զոր օրինակ, թողում։ չորրդն 'ի ԷՄ. զոր օրինակ, հաշտիմ։

Ըստ վերոյգրեալ ինն պարագայիցդ՝ բառս այս ոչայդ՝ է բայ կանոնաւոր. ՝ի սեռին՝ ներգործական չեզոքական. ՝ի ձևոյն՝ պարզ. ՝ի տեսակին՝ նախատիպ. ըստ թուոյն՝ եղական. ՝ի դիմին՝ երրորդ. ՝ի ժամանակին՝ անկատար. ՝ի եղանակին՝ սահմանական. ՝ի խոնարհմանն՝ խոնարհի ՝ի երկրորդ լծորդուն՝ ոգ ընթանամ, ընթացայ, ընթանայր։

Պարձեալ՝ բառս պարզոցին՝ է բայ կանոնաւոր. ՝ի սեռին՝ ներգործական. ՝ի ձևոյն՝ պարզ. ՝ի տեսակին՝ անցողական. ՝ի թուոյն՝ յոգնական. ՝ի դիմին՝ երրորդ. ՝ի ժամանակին՝ կատարեալ. ՝ի եղանակին՝ սահմանական. ՝ի խոնարհմանն՝ խոնարհի ՝ի առաջին լծորդուն՝ ոգ մատուցանեմ, մատուցի, մատուցին։

Յաղագս ընդունելուն։

Ընդունելուին է մասն բանի, որ նշանակէ զիրն յառնելուն, կամ 'ի կրելուն. և մերթ զառս՝ կամ զկիրս ՝ի Յիսուս։ Այս է չորս՝ ՝ի չորից վերջաւորութեանցս՝ օղ, եալ, ուց, լէ. զոր օրինակ, *գնող. գնեալ. գնելոց. գնելի։ Պարագայք ՝ի ունելուն են վեց. սեռ, ձև, տեսակ, և ժամանակ՝ ՝ի բայից. թիւ, և հոլով՝ ՝ի անուանց։ Այս ըստ այսոցիկ պարագայից՝ բառս 'ի լուսաղարդելոց՝ է ՝ի ունելուի յանդեալ 'ի եալ. ՝ի սեռին՝ կրաւորական. ՝ի ձևոյն՝ բարդ. ՝ի տեսակին՝ նախատիպ. ՝ի ժամանակին՝ անցեալ. ՝ի թուոյն՝ յոգնական. ՝ի հոլովին՝ բացառական. և հոլովի ոգ՝ գետ, գետոյ, 'ի գետոց։

Յաղագս նախադրութեանց, մակբայի, շաղկապի, և միջարկութեանց։

Նախադրուին է մասն բանի, որ 'ի յարիւն յանուանցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անուանն նշանակէ։ Ամենք 'ի նախադրուեց են հոլովակերաք. օրդոն, *'ի, յ, առ, առ 'ի, ց, ՝ի, զ։ և ոմանք հոլովառուք. օրդոն, *ըստ, քան. վասն. 'ի վերայ. 'ի ներքոյ. ՝ա.

Այ՝ակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեց նշանակէ. օրգոն, *ուր. երբ. զիարդ. միթէ. ահա. և այլն. և ունի երեսնեւերեք տեսակս.

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ըստ միմեանս զմասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս. օրգոն, *և. իսկ. թէ. զի. և այլն. և ունի վեշտասան տեսակս։

Միջարկութիւն է մասն բանի, որ զբնական կիրս հոգւոյն յայտ առնէ. օրգոն, *օվ. աւաղ. վահ. և այլն. և ունի վեշտասան տեսակս։

ԳԼՈՒԽ Բ։

Յաղագս կամաձայնութեանն մասանց բանի։

Կամաձայնութիւք մասանց բանի են կապակցութիւք նոցա ըստ միմեանս՝ առ 'ի կազմել զբան։

Այս կապակցութիւք լինին ութն եղանակաւ. 'Նախ՝ անուշան ըստ անուշան։ Երկրորդ՝ դերանուշան ըստ դերանուշան և ըստ անուշան։ Երրորդ՝ բայի ըստ անուշան, ըստ դերանուշան և ըստ ընդունելուն։ Չորրորդ՝ ընդունելուն ըստ անուշան և ընդ դերանուշան։ Հինգերորդ՝ նախադրութեան ըստ անուշան, և ըստ այնս՝ որք իբր անուն հոլովին։ Վեցերորդ՝ մակբայի ըստ բայի. և ըստ այնս՝ որք ունին զզօրութիւն բայի։ Եօթներորդ՝ միջարկութեան ըստ բանի։ Ութերորդ՝ շաղկապի ըստ բանի, և ըստ մասունս նոր։

Յաղագս կամաձայնութեան անուշան ընդ անուշան։

Անուշանք որոյ հետեւեալ կիր գոյական են, և կամ ածական, 'ի գալ սոցա առ միմեանս՝ հարկ է, զի կիր գոյականքն ըստ գոյականաց համաձայնեսցին, կիր ածականքն ըստ ածականաց, կիր գոյականքն ըստ ածականաց, և կիր ածականքն ըստ գոյականաց։

Արդ՝ գոյական անուշանք երրակի կարեն համաձայնիլ ըստ գոյականաց։ 'Նախ՝ իբր բացայայտիչ։ Երկրորդ՝ իբր յատկացուցիչ։ Երրորդ՝ իբր խնդիր։ քանզի՝

'Նախ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել զնշանակուն անուշան իրիք, թէ յինչ միտս դնի, կիր փիսկ որոյ նշանակէ, յարեալք 'ինոյն զայլ անուշն առանց շաղկապի թռուցալ և հոլովիւ համաձայն նմին. և այն լինի

նմա

նմա բացայայտիչ. զի, * Լու առեալ Հրեշտակին զամ-
բակում՝ տարաւ զնա 'ի քաղաքն Բաբիլոն ॥. Որ գոյա-
կան անունդ Բաբիլոն՝ է բացայայտիչ անուանն 'ի փաղաք.
զի յայտ առնէ՝ թէ անուամբս փաղաք՝ իմացեալ լինի
աստ Բաբիլոն, և ոչ նիւնուէ, կամ գաղա։

Յոյնպէս և յայս բան, * Որ շինեցեր զտուն քո զեկե-
ղեցի իմաստուն հօր յա ॥. անունս ղեկեղեցի՝ է բացայայ-
տիչ անուանս ղոուն քո. զի յայտ առնէ, թէ բաւիւս
ղոուն՝ իմացեալ լինի աստ եկեղեցին. և ոչ թէ ապարանք
ինչ, և կամ այլ ինչ շինուած։ Ի աստ այսմ և անունդ
յա՝ է բացայայտիչ անուանս իմաստուն հօր։

Արկրորդ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել,
թէ արդեօք նշանակեալն անուան իրիք՝ որոյ է, կամ ո-
րում յատկանայ, յարեմք 'ի նոյն զայլ անուն՝ (և մերթ
'ի տեղի անուան զդերանուն, կամ նաև զընդունելուն
և զդերբայ,) 'ի սեռական հոլովին. և այն լինի նմա
յատկացուցիչ. զոր օրինակ, * Ոչ արուք մանկունք ըզ-
խրատ հօր ॥. Որ անունս հօր՝ է յատկացուցիչ անուանս
խրատ. զի ցուցանէ, թէ խրատն այն՝ հօր է, և ոչ օտա-
րի, կամ թշնամւոյ։

Յոյնպէս և յայս բան, * Արեդական լոյս խաւարե-
ցաւ ॥. անունս արեգական՝ է յատկացուցիչ անուանդ
լոյս. զի ցուցանէ, թէ այն լոյս՝ արեգական է, և ոչ
ճրագի, կամ հրոյ, և կամ այլոյ իրիք աստեղ։

Այս եթէ պիտոյ լիցի յայսպիսիս նախդիր դնել, սիրատ
է յարել զայն 'ի նախընթացն, թէ յատկացուցիչ իցէ
այն, և թէ յատկացուցեալ. զոր օրինակ, * Զ խարդ
պատմեցից զթիւ մեղաց իմոց ॥. * Կալցուք յանձինս
զՀրեշտակացն սրբոյն ॥։ Այս նախդիր երբեմն կրկնի
'ի վեր երկուցն ևս, մանաւանդ եթէ անկցի 'ի միջի
բայ. զոր օրինակ, * Զ կենացն ետուր զՀաց ॥։

Արրորդ՝ յորժամ հարկ լինի գոյական անուանց առ-
նուլ զինդիր՝ յարեմք 'ի նոսա զայլ անուն, (կամ 'ի
տեղի անուան զդերանուն կամ զընդունելուն,) երբ
խնդիր նց՝ ը պահանջելոյ նշանակուն նոցին։ Այսն
զի ոմանք 'ի գոյական անուանց ունելով զՀաղորդուն
ը բայից՝ ուրեք ուրեք պահանջեն խնդիր առնուլ ը
որպիսուն բայիցն. որպիսի են բայանուանք. իսկ թէ

զիմբրդ , դիցուք զերիս կանոնս։

Կանոն . ա . Անուանք , ներդործականահաղորդք , այ-
ոքք ունին զհաղորդութիւն ըստ ներդործական բայից , առ-
նուն զինդիր սեռի 'ի սեռական հոլովին , և մերթ 'ի
հայցականն . զոր օրինակ , * Զդման ձեռին . փչմամբ
զՀոգին։

Այս երբեմն և սա հանդերձ խնդրով սեռի առնուն նաև
զինդիր բնուն յայնպիսի հոլով՝ զորպիսի պահանջեն
բայքն , ըստ որոց ունին զհաղորդութիւն . զոր օրինակ , * ձերդ-
ման ձեռին 'ի ծառն . փչմամբ 'ի նոր զՀոգին։

Կանոն . բ . Անուանք , կրաւորականահաղորդք , այս-
ինքն որք ունին զհաղորդութիւն ըստ կրաւորական բայից ,
առնուն զինդիր սեռի 'ի բացառական հոլովին . զոր օրի-
նակ , * առաքմամբ 'ի հօրէ։ Այս երբեմն նաև զինդիր
բնուն . զոր օրինակ , * առաքմամբ 'ի հօրէ յՅ։

Կանոն . գ . Անուանք , չեզոքականահաղորդք , այ որք
ունին զհաղորդութիւն ըստ չեզոքական բայից , զայնպիսի
խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն . որոց հա-
ղորդին . զոր օրինակ , * գալստեամբ 'ի տաճարն . հը-
րաժարումն յաշխարհէ։

Յաղագս համաձայնութեանց գոյականն անուանց ընդ ածականաց։

Համաձայնութիւն գոյական անուանց ըստ ածականաց՝
է լինելն նոցին խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութե-
նոցին՝ ըստ երից կանոնաց՝ զորս եդաք վասն գոյական ան-
ուանց . զոր օրինակ , Ժառանգորդ արքայութեան , կործա-
նիչ մեհենաց . դիւրաշարժ 'ի հողմոյ , անտես 'ի մարդ-
կանէ . հաւասար հրեշտակաց , զօրաւոր բանիւք։
Իսկ անուանք բաղդատականք այլապէս առնուն զինդ-
իր . զոր օրինակ , * դերագոյն քերովբեէից . * վսեմա-
գոյնն յիշխանաց . * տկարագոյն յանասունս . * բարձ-
րագոյն քան զերկինս։

Այլ անուանք թուականք և մասնականք և հարցա-
կանք՝ հասարակօրէն առնուն զինդիր 'ի բացառական
հոլովին . զոր օրինակ , * երկու 'ի նոցանէ . ոմն 'ի հարց-
ուլ 'ի մարդկանէ։

Յաղագս համաձայնութեան ածականաց անուանանց ընդ գոյականաց։

Ածական անուանք յարեալ 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութիւն իրացն՝ զորս գոյականքն նշանակեն. և քանզի պէսպէս եղանակաւ յարին սոքա 'ի գոյականս՝ պէսպէս համաձայնին ըստ վեց կանոնաց։

Կանոն. Ա. Ածական անուանք՝ յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ թուոյ և հոլովի. զոր, * Օրհնեալք Եմմանուէլ տիրեսցեն տերանց անմոռաց ։

Կանոն. Բ. Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց. ոչ համաձայնին ընդ նոսա՝ ոչ թուով և ոչ հոլովիւ, թէ մի իցեն և թէ բազում. զոր օրինակ, * Լանայն բանիւք ընդդէմ զինին ճշմարիտ և ողջախոհ վերդիզտուն ։ Լոկ միավանկ ածականք՝ երբեմն համաձայն դնին. զոր օրինակ. * Սէր պատարագին.

Նորոց կտակարանաց։

Կանոն. Գ. Յորժամ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկանի բայ, կամ ընդունելուն, ածականն հասարակօրէն համաձայնի ընդ գոյականին՝ թուով և հոլովիւ. զոր օրինակ, * Երկայնագունից կարօտիմք բանից ։ * Ճայնով զինեալ զօրութիւն ։ Այլ երբեմն անհամաձայն ևս դնի. զոր, * Պերապանծ եհաս իշխանութիւն ։ * Զգայական ծածկեալ լուսոյ ։

Կանոն. Դ. Եթէ նախադաս ածականն ունիցի զդիմորոշական տառ, երբեմն համաձայնի ընդ յետադաս գոյականին և երբեմն ոչ. զոր օրինակ, * Զոհայարձուք զմարդասիրէն ամ ։ * Ամ տիրականդ իշխանութիւն հաղորդս արարեր զոր զառաքեալն ։

Կանոն. Ե. Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում, յետադաս ածականն դնի ընդ թուոյն յոգնական, և ըստ հոլովին համաձայն. զոր օրինակ, * Ողջոյն տաջիք անդրոնիկեայ և յունեայ ազգականաց իմոց ։

Կանոն. Զ. Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին, կամ գոյականն ածականին, նախադիրն դնի 'ի վերայ նախադասին. զոր օրինակ, * Զարձ՝ զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն ։ * Պակասնեն զբարս քաղցունս՝ բանք չարք ։

Եւ ևս՝ եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն

ցեն բաղում, և ունիցին զշաղկապն, նախդիրն դնի 'ի վր՝ ամի. զոր օրինակ, * Որ զհակառակասէր և ըզ-դժնդակ վարս ուղղեսցէ... զորովքեիցն կարդ ունի։։ * 'Ի յայրս և 'ի փապարս խաւարային բնակեալ։։ Եւ եթէ նախադաս ածականն կամ գոյականն իցէ մի, իսկ յետադասքն իցեն բազում, նախդիրն ոչ միայն դնի 'ի վրա՝ նախընթացին, այլ և 'ի վր՝ երկրորդ և երրորդ յետադասին. զոր օրինակ, * 'Ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս։։ * Այր արիւնահեղ և գնեանգաւոր պիղծ առնես դու զոր։։

Յաղագս կամաչայնութեան ածականն անուանանց ընդ ածականաց։

Ածական անուանքն չորեքկին համաձայնին ընդ միմեանս. 'Այսպէս՝ իբր ածական. զոր օրինակ, * Հանգանաք զոր խորհրդատուս։։ Երկրորդ՝ իբր խնդիր. զոր օրինակ, * Հրաւիրատուք պրոմանանաց։։ Երրորդ՝ իբր բացայայտիչ. զոր օրինակ, * Ուսուցանել զմեզ այնպէսք լինել, (՝ի) հեղ և խոնարհ։։ Չորրորդ՝ իբր յատկացուցիչ. զոր օրինակ, * Ժողովրդեանք կենդանանաց՝ դիւրինք նման երևին։։

Յաղագս կամաչայնութեան դերանուանանց։

Դերանուանքն հնգապատիկ են. էական, ցուցական, ստացական, յարաբերական, և դիմորոշական։ 'Ի մէջ սոցա էական դերանուանս ինչն՝ բազում անգամ յարեն յայլ դերանուանս՝ համաձայն՝ թուով և հոլովիւ. և իբր մի վարի ընդ. զոր օրինակ, * Ես ինքն. դու ինքն. նա ինքն. սոյն ինքն. որ և ինքն. ոք։։ Սոյնպէս յարին ընդ միմեանս և ցուցականն դերանուանք. զոր օրինակ, * սոյն սա. դոյն այդ. նոյն այս. ոք։։ Էական դերանուանքս՝ ես, դու, ինքն, ոք, (և ս և ցուցական դերանուանքս՝ սա, դա, նա, էականապէս վարեալք), 'ի գործ ածին իբր գոյական. և ըստ գոյական անուանց, 'Այսպէս՝ լինին յատկացուցիչ. զոր օրինակ, * զկեանս իմ. զտուն քո. ըստ իւր կամաց. բանք սրբ. գիրք դրբ. վարքն նրբ։։

Երկրորդ՝ լինին խնդիր անուանց, և սև ընունելուեց և նախադրութեց. զոր օրինակ, * անմոռաց յիւրմէ. խնամ-

խնամօղ լինքեան. վասն նորա։

Երրորդ՝ լինին բացայայտելի 'ի ձեռն անուանց՝ համ-
ձայն թուոյ և հոլովի. զոր օրինակ, * Այս որ
խօսեցայ ||. * 'Ի մէնք յաշակերտացս քոյ փառաւորի
պաշտօնն այ ||.

Չորրորդ՝ յարին յածականս և յանուանելութիս՝ համա-
ձայն թուոյ և հոլովի. զոր օրինակ, * Ած քաւեա
զիս զմեղաւորս ||. * Զեզ նեղելոցդ հանգիստ ||։

Յուցական դերանուանքս՝ սա, դա, նա, յորժամ հոլո-
վին՝ սա, սորին, սմին. դա, դորին, դմին. և այլն.
հասարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ը գոյա-
կանաց՝ 'ի հինգ հոլովս միայն. 'ի սեռականն. օրգոն,
* սորին խորհրդոյ։ 'ի վերջնահոլով տրականն. օրգոն,
* դմին կանանի։ 'ի գործիականն. օրգոն, * նովին բա-
նիւ։ 'ի պարառականն. օրգոն, * զսովին տեղեաւ։ 'ի
ներգոյականն. օրգոն, * 'ի դմին տան.

Յուցական դերանուանքս՝ այս, այդ, այն, իբր ածա-
կան վարին. և 'ի յարին յանուանս՝ հասարակօրէն հա-
մաձայնին ը նա թուոյ և հոլովի, զոր օրինակ. * այսը
տեսուէ. այդմ պաշտաման. յաշխարհին յայնմիկ. ||։
Այլ սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. զոր օրի-
նակ, * այս պատկերաւս. յայդ նեղուէդ. խորհրդոյն
այն. և այլն։

Այս եթէ նախդաս անուանն նախդիր ունիցի, նախդիրն
միշտ և յամի կրկնի նաև 'ի վերջ այսոցիկ դերանուանց.
զոր օրինակ, * Զոր ես ասպաւէն իմ 'ի նեղուէ յայս-
մանէ ||. * Զոմանակ զի արարեր դու զբանդ զայդ ||։
* Այս եղև ը աւուրսն ընդ այնոսիկ եկ հրաման յօգոս-
տոս կայսերէ ||։

Յուցական դերանուանքս՝ սոյն, դոյն, նոյն, հասարա-
կօրէն նախադաս լինելով անուանց վարին. և զի սՔ
միայն նախդրիւ հոլովին, առանց համաձայնուէ յարին
'ի նա. զոր օրինակ, * 'ի սոյն դատաստանաց. 'ի դոյն
սենեկի. զնոյն չարչարանաց. ||։

Պատացական դերանուանքս՝ ԷՄ, ԷՈՅ, ՄԷՐ, ՅԷՐ, ԷՐ, ԷՐՈՅ,
միշտ իբր ածական վարին. և 'ի յարին յանուանս՝
միշտ համաձայնին ը նա, թէ 'ի նախադասին՝ և թէ
'ի յետադասին. (բաց 'ի չորից յոգնական հոլովից,

որք են՝ ուղղական, հայցական, նախադրիւ տրական, և ներգոյական)։ զոր օրինակ, * Ի տան հօր իմոյ բազում թեւանք բազումք են։ * Տան քում վայելէ սրբութիւն։ * Ի գայթակղեսցին բազումք մերում գայթակղութիւն։ * Տեսանեն զքաջուն ձերոյ նահատակուեդ։

* Ներհակ իւրոցն վարդասպետէ օրինաց։

Բ. սայլ՝ բաց 'ի էրից յոգնական հոլովից։ զի 'ի նոսին միշտ անհամաձայն դնին։ որ, * ծառայք իմ։ և ոչ իմք։ * զվաստակս քոյ։ և ոչ քոյս։ * ի դրունս ձեր։ և ոչ ձերս * 'ի տունս մեր։ և ոչ մերս։

Յարաբերական դերանունս որ՝ 'ի յարաբերելն զանուն, կամ զդերանուն՝ համաձայնի ընդ նմա ի թիւոյն։ զոր օրինակ, * Լուր որդեակ հօր քո, որ ծնաւ զքեզ։

Իսկ ի հոլովին՝ դնի յայն հոլով՝ յորդ դնելի էր յարաբերելին։ և այս՝ կ իբր անուն բայի, կ իբր խոնդիր, կամ իբր յատկացուցիչ, և այլն։ զոր օրինակ, * Ա. Յ օթեան է անձն՝ որ յապաշխարուէ իցէ։ * Սակաւ ողորմութիւն՝ զոր արարեր, զբաղմապատիկ պարտսն՝ թողցէ քեզ։ * Ոչ կարէ կրել նա յոգի իւր զբանս անմիւթս որոյ միտք ծանրացեալ իցէ 'ի նիւթոյ երկրի։

Ա. յլ գիտելի է, զի սա երբեմն յարաբերէ զնախընթացն։ զոր օրինակ, * Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց։ Երբեմն զհետեւեալն։ զոր օրինակ, * Ի սաեղծ զշունչս ամենայն, նա գիտէ զամ։ Լու երբեմն զօրութիւն ունի զյարաբերելին։ զոր օրինակ, * Որ սիրէ զկեանս՝ խնայէ 'ի բերան իւր։ ի նա՝ որ սիրէ։ Ի մորոշական յօդքս՝ ս, դ, ն, յարին յանուանս, 'ի դերանուանս, 'ի բայս և յընտանեալութիւս, և երբեմն նաև յայլ մասունս բանի՝ առ որոշումն դիմաց։ զոր օրինակ, * տանս։ քոյդ։ ասէն։ 'ի տառապելոցս։ Ա. յլ երբեմն դնին սոքա փոխանակ միմեանց։ զոր օրինակ, * Լու զոր ասէս՝ այս է։ * Ոչ յիշես՝ զոր ասացեալ քեզ։ * Օ որ առնեմն և արարից։ * Ի միտ առ զոր խօսիսն։

Յաղագս համաձայնութեան բայի։

Բայք կրկնակի համաձայնին ընդ անուանս, և ընդ այլ մաս-

մասունս բանի. նախ՝ իբր ել այնս, որք ասին անուն բային. երկրորդ՝ իբր ել այնս, որք ասին խնդիր բային. ոչ յայս բան, * Կային սպան զՀաբէլ։ բայս սպան՝ համաձայնի ել երկուց անուամանցս կային և զՀաբէլ. Որոց առաջինն կոչի անուն բայի. և ցուցանէ զնոր գործողութիւն սպանանելոյն. այ զսպանօղն. և այն է անունս՝ կային։ Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի. և ցուցանէ զնոր գործողութիւն սպանանելոյն. այ զսպանեալն. և այն է հայցական հոլովս՝ զՀաբէլ։

Այնպէս և յայս բան. * Տրտնջօղն՝ թերահաւատ է։ բառս տրտնջօղն՝ է անուն բային. էն՝ է բայ. Ներբակաւորն՝ է խնդիր։ Զ.յլ թէ սոքա զիարդ պարտին համաձայնիլ, դիցուք զպէտս կանոնս։

Կանոնք վասն անուանն բայի։

Կանոն. ա. Զ.թէ բայն ի ցէ դիմաւոր, անուն բային դնի յուղղական հոլովն. զոր օրինակ, * Տրդատ յաղթեաց հռչէր։ Որ վասն դիմաւոր դոլոյ բային յաղթեաց, անուն բային՝ որ է բառս տրդատ՝ եդեալ է յուղղական հոլովն։ Իսկ եթէ բայն ի ցէ անդէմ, անուն բային իբր 'ի բազումս դնի 'ի սեռական հոլովն. որ, * Յաղթահարեալ տրդատայ զհռչէ՝ պատկերցաւ 'ի դիսկղեանսնոսէ։ Որ սեռական հոլովս տրդատայ՝ է անուն բային յաղթահարեալ։ Զ.յլ երբեմն յուղղական հոլովն ևս դնի. զոր օրինակ, * Նս մուշեղ առեալ զզօրս իւր՝ խաղայ յարևելս։

Կանոն. բ. Զ.թէ բայն ի ցէ դիմաւոր, անուն բային համաձայնի ել նմա թռուոյ և դիմաւ. որ, * Ձոխս աղքատացայ։ Որ որպէս դիմաւոր բայս աղքատացայ՝ ըստ թռուոյն է եզական, և ել դիմին՝ յառաջին դէմն, նոյնպէս և անուն բային, այ է ձոխ՝ ել թռուոյն է եզական, և յառաջին դէմն 'ի ձեռն յօդիդ՝ ս. որպէս թէ ասէր, ես ձոխս աղքատացայ։

Զ.յլ այսպիսի յօդ՝ երբեմն զօրութիւն դնի յերրորդ դէմն. որ, * Պայթակղեսցին չարք առաջի բարեաց. և ամենարիշտք կողկողեսցին առ դրունս արդարոց։

Կանոն. գ. Զ.թէ անուն բային ի ցէ բազում՝ ել նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի. որ։

* Ընդրեաս և փիլիպպոս ասեն զյե ։ Բայց երբեմն
'ի հասարակ անուանս դնի և սեղակի. գր, * Լախանձ
և հակառակութիւն խռովեցոյց զթագաւորուիս ։

Կանոն. ԺԲ. Եթէ անուն բային ի ցեղ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուական դէմն, և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն, յայսպիսիս՝ բայն դնի յայն դէմս, որ պատուականագոյն է. զոր օրինակ, * Լս և դու դնայաք 'ի միասին ։. * Յողոմէոնքիք անդր
դու և զորք քոյ ։.

Կանոն. ԺԳ. Եթէ անուն բային ը ձայնին ի ցեղ եզական, իսկ ը նշանակուէն բազմաւորական, (որպիսի են անուանք թուականք,) բայն դնի յոգնակի. զոր օրինակ, * Լաւ են երկու քան զմի ։. * Նկան 'ի նոցանէ քսան
հազար այր ։

Իսկ եթէ անուն բային ի ցեղ հաւաքական, բայն երբեմն դնի յոգնակի. զոր օրինակ, * Զունդ զօրացն դարձան ։. * Զգ. եկին 'ի հիւսիսոյ ։ Լ. Երբեմն եզակի. զոր օրինակ, * Յրոմեցաւ դունդն ։. * Զաբաւեաց ժողովուրդն ։

Զայլ ասա պարտ է գիտել, զի երբեմն անուն բային զօրութիւն դնի. գր, * Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս ։. Որ զօրութիւն իմանի անուն բային, ցանքն։ Լ. Ներհակ այսմ՝ երբեմն բայն դնի զօրութիւն. գր, * Ոչպ ժամանակ՝ այժմու կեանքս ։. Որ զօրութիւն գոյ բայս՝ է։

Կանոնք վեց խնդրոյ բայից։

Բայք ներգործականք և կրաւորականք առնուն ըզկրկին խնդիր. ցանզնդիր սեռի, և զնդիր բնութեան։ Իսկ չեզոքականք, ընդ որս և էականք՝ միայն զնդիր բնութեան. ոչ տեսցի յառաջիկայ կանոնսդ։

Կանոն. Ա. Ներգործական բայք առնուն զնդիր սեռի 'ի հայցական հոլովն. գր, * Մեղ ծածկէ զձառագայթս արեգական. և զմիտս խաւարէ յոլով կերակուրք։ Որ հայցական հոլովս պճառագայնս՝ է խնդիր սեռի բայիս ծածկէ. և հայցական հոլովս զիսոս՝ է խնդիր սեռի բայիս խաւարէ, ցանքն խաւարեցուցանէ։

Կա-

Կանոն. Է. Կրաւորական բայք առնուն զենդիր սեռի 'ի բացառական հոլովն. զր, * Ի տնէ ուղղին գնացք առն ॥. Իւր բացառական հոլովս 'ի գնէ՝ է խնդիր սեռի կրաւորական բայիս ուղղին։

Կանոն. Ը. Դայք ներգործականք և կրաւորականք բաց 'ի խնդրոյ սեռի՝ առնուն երբեմն զենդիր բնութեան ըստ պահանջելոյ նշանակութեանն իւրեանց՝ 'ի պէսպէս հոլովս. ոմանք 'ի տրականն, ոմանք 'ի բացառականն, և ոմանք յայլս. զոր օրինակ, * Լոչեաց անօրէն իշխանն զվասակ առ ինքն, և խոստացաւ նմա մեծութիւն բազում. զի քակտեսցէ զուխտն հայոց 'ի միաբանութենէ, և հաստատեսցէ յՅոին զհրաման թագաւորին ॥։

Կանոն. Թ. Ընդոքական բայք առնուն զենդիր բնութեան պահանջելոյ նշանակութեանց՝ 'ի պէսպէս հոլովս. ոմն ասացաք զներգործականաց. զոր օրինակ, * Վասակ՝ որ օտարացեալն էր 'ի սիրոյն քոմի, հնազանդեցաւ ողջքանաց անօրէն իշխանին, և մարտեաւ հնարիւք ընդ բազում. և որք հաւանեցան նմա, իջին ընդ նմա 'ի դժոխս ॥։

Յաղագս անորոշն բայի։

Անորոշ բայք որովհետև իբր անուն հոլովին, 'ի գործ ածին երբեմն իբրև անուն գոյական. և լինին անուն բայի, խնդիր բայի, խնդիր անուանական, խնդիր ընդունելութեան. և այլն։

Խնդրոյ գործ իբր բայ վարին, լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բայից. զոր օրինակ, * Որ կամիցի՝ զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա ॥. Իւր անորոշութեան բայս կեցուցանել՝ ինքնին խնդիր լեալ կամելոյն արգելեալ է զենդիր նոր. և ինքն է առեալ զենդիրն. որ է բառդ զանձն իւր. ոչ թէ ասէր, որ կամիցի զկեցուցումն անձին իւրոյ՝ կորուսցէ զնա։

Երբեմն ևս լինին սՀ տրական խնդիր բայի՝ իբր դերբայ՝ զօրութիւն ունելով զնախդիրդ 'ի կամ առ 'ի. զոր օրինակ, * Հողովեին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկիլ 'ի հիւանդութենէ իւրեանց ॥. Ցառ 'ի լսել, և 'ի բժշկիլ։

Յաղագս համաձայնութիւնք ընդունելոցս։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի օր՝ միշտ իբր ածական անուն վարին. և ըստ կանոնի համաձայնութեան ածականաց յարին 'ի գոյականս. զոր օրինակ, * 'Ի բաց կաց 'ի դժրօղ բերանոյ ॥. * Սակաւ օգտեն խրատք՝ առն բարկացողի ॥։

Սոքա 'ի վարին ներգործականապէս՝ առնուն զխնդիր սեռի 'ի հոլովն սեռական՝ կամ հայցական. զոր օրինակ, * Խնամող արարածոց ॥. * Ընդունօղք զբանն կենաց ॥։ Նոքեամն առնուն նաև զխնդիր բնուն ըստ պահանջելոյ բայիցն, յորոց բղխեն. զոր օրինակ, * Ռեզ որդւոյ ընորհօղիդ մեզ զկեանս՝ փառք ॥. * Յորոգօղք տիեզերաց 'ի նախահօրն յանցանաց ॥։

Իսկ որք վարին չեզոքականապէս, ըստ բայիցն՝ յորոց ելանեն, առնուն զխնդիր. զոր օրինակ, * Համբերօղ վշտաց ॥։ * Հայեցօղ յօձն պղնձի ॥. * 'Ի մեղաց զգուշացօղ ॥։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի ել՝ եթէ ներգործականապէս առցին, իբր դրադեմ բայ վարին. զոր օրինակ, * Ամենեալ զթշնամին՝ խորտակեցիք ॥։

Իսկ եթէ կրաւորաբար՝ կամ չեզոքականապէս առցին, երբեմն վարին իբր զդրադեմ բայ. զոր օրինակ, * Դաջալերեալ 'ի բանից նր՝ յաղթեցին թշնամեաց ॥. * Ի չեալ մարմնով 'ի գերեզման՝ զկապեալ հոգիսն վերացեաց ॥։ Լաւ երբեմն վարին իբր ածական անուն՝ ըստ կանոնի համաձայնութեան ածականաց. զոր օրինակ, * Որ փակեալ գրամբք երեկոյին՝ երևեցար մեծասանին ॥. * Ամ 'ի բարկանար եղբօր մերոյ ॥։

Հայսպիսի ընդունելութիւնք զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. զոր, * Հաստատեալ զանձն յանախտ կեանս՝ առաքինանայր 'ի ճգնութիւս ॥. * Ցահատակք՝ պանծալիք՝ և սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն ॥. * Գնական է դարձեալոց առ նա ॥։

Ընդունելութիւնք յանգեալք 'ի ոց՝ իբր բայ վարին՝ յարելով յէական բայս. և առնուն զայնպիսի խնդիր, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. զոր օրինակ, * Ցալոց ի ամէն զահագին իւր վճիռ ॥. * Արդարք յափշտակեալ

դելոց են ամենուքք 'ի հրեշտակաց յերկինս ։ * Տեսա-
նեմ միշտ զօրն զայն՝ յորում 'ի գահոստան գնալոց եմ ։
Ընդունելութիւնքյանդեալք 'ի նի՝ վարին իբր ածական.
և ՝ի համանձայնութեանն ածականաց յարին 'ի գոյականս.
որ, * Լսնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութիւն
մարդկան ։ * Պատմող լինել պետրոսի և յովհաննու
սիրելւոյ ։

Այս սոքա հասարակօրէն առնուն զենդիր 'ի տրական
հոլովն. զոր օրինակ, * Գովելիք Տի, և բաղձալիք վերջ
նոցն պետութեան ։

Յաղագս կողմանեաց բանի։

Ի համանձայնութիւնէ մասանց բանի կազմի բան. երբ
բեմն 'ի բաղում բառից, և երբեմն 'ի սակաւուց՝ գոնէ
յերից. այսինքն՝ 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի
խնդրոյ նորին. որ, * Հայկ ծնանի զարմենակ ։ Ուր
հային է անուն բայի. ծնանին բայ. զարմենակն խնդիր։
Այլ երբեմն մի 'ի սոցունց զօրութիւն դնի. որ, * Լս
վերիպեցայ ։ * Լս անհամբեր ։ * Յուսա առ ՝ած ։ .
որ ես վերիպեցայ 'ի բարւոյն. ես եմ անհամբեր. դու
յուսա առ ՝ած։

Իսկ երբեմն այլ մասունք բանի ևս յարին 'ի սոսա, և
և բաղում անուանք՝ ՝ի զանազան պաշտօնի. այսինքն
իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական,
՝ի. որոց վասն եղեալ ասա զերիս համառօտ օրինակս՝
լուծցուք զնոսին կարգաւ՝ 'ի դիւրութիւն և 'ի յուսումն
համբակաց։

Օրինակ. ՝ա. * Գանձ ցանկալի հանդիպեն 'ի բերան
իմաստնոյ. արք տգէտք կլլեն զնա ։ առակ. ՝ի. 20։
'Ի սմա՝ գանձն է անուն բայի։ Ցանկալի՝ է ածական նոր։
Հանդիպեն՝ է բայ։ 'Ի բերան՝ է ներգոյական խնդիր
բային։ Իմաստնոյ՝ է յատկացուցիչ բերանոյն։ Արք՝ է ա-
նուն բայի։ Տգէտք՝ է ածական նոր։ Կլլեն՝ է բայ։ Զնա՝
է խնդիր սեռի նոր։

Օրինակ. ՝բ. * Որդեակ իմ՝ մի նախանձիր ՝ի չարս.
և մի ցանկանայցես կալ ՝ի նոսա ։ առակ. ՝իգ. 1։ 'Ի սմա՝
որդեակն է կոչական անուն։ Իմ՝ է ստացական դերանուն.
և է լեալ ածական որդեակին։ Մի՝ նախանձիր՝ է բայ. որոյ

անունն զօրուբ դնի . ՝ի՝ դու ։ Ի՝նդ կաբ՝ է խնդիր նը-
բա ։ Լան է շաղկապ ։ Ա՝ է մակբայ ։ Յանկանայցես՝ է
բայ . որոյ անունն է նոյն զօրուբ խմացեալ դերանունն .
այս է՝ դու ։ Կալ՝ է արգելիչ խնդրոյ նը՝ , ՝ի՝ ցանկանա-
ցեալն ։ Ի՝նդ նուա՝ է խնդիր կալոյն ։

Ողջունակ . ՝ի . * Հրեշտակք երկնից փափաքին հանդի-
սի կատարման սը՝ . ողք ՝ի մահուն իւրեանց կենդանա-
ցան , ելին ՝ի կամարն երկնից , խառնեցան ՝ի գունդ
զուարթնոցն ‖ . զոր . ՃԺԲ ։ ՝Ի սմա՝ հրեշտակ՝ է անուն
բայի ։ Ի՝ր՝նեն՝ է յատկացուցիչ հրեշտակայ ։ Փափաքին է
բայ չէզոքական ։ Հանդիսի՝ է նը՝ խնդիր բնուբ ՝ի տրա-
կան հոլովն ։ Կարարմանն՝ է յատկացուցիչ հանդիսին ։ Սոցա՝
է յատկացուցիչ կարարմանն ։ Որ՝ յարաբերեալ զդերանունս
սոցա . և է անուն բայիցս՝ կենդանացան , ելին և խառնեցան ։
՝Ի մահուն ենբանց՝ է եկրդական խնդիր բայիս կենդանա-
ցան . որոյ բուն խնդիրն զօրութբ դնի ՝ի դրդիական
հոլովն . այսինքն է՝ հոգաուն ։ Ենբանց՝ է յատկացուցիչ
մահուան ։ Ելին՝ է չէզոքին բայ ։ ՝Ի կամարն՝ է խնդիր նը՝ ։
Ի՝ր՝նեն՝ է յատկացուցիչ կամարին ։ Խառնեցան՝ է իբր չէ-
զոքական բայ ։ ՝Ի գունդ՝ է խնդիր նը՝ ։ Զուարթնոցն՝ է
յատկացուցիչ գնդին ։

ՅԵՐԵԼՈՒԱԾ ։

Յետ ՝ի միտ առնլոյ ուսանողաց զհանդամանս մը-
սանց բանի , և զքերականական կանոնս , ևս և
յետ սակաւուք վարժելոյ ՝ի լուծումն շարադրուեց ,
Ի՝թէ ցանկան բարուք ևս տեղեկանալ որպիսուն հայ-
կազեանս լեզուի , և Հաշակել զքաղցրութիւն քերթո-
ղական արուեստի , պիտոյ է նը՝ յիւրեանց ևս կազմել
զշարադրութիւն բանից ։ Իսկ առ սկիզբն առնել այսմ՝
հարկ է նը՝ զառաջինն՝ համառօտ ինչ աշխարհաբառ
բանս դարձուցանել ՝ի գրաբառն , և ապա նովին առ-
ատակաւ սակաւ զարգանալ ։ Ա՝յլ ոմն զի զարթիցէ ՝ի
սիրտ նը՝ փոյթ ՝ի սոյն յօժարելոյ՝ պատշաճ համարիմ
դնել աստանօր առաջին նը՝ բանի մի աշխարհաբառ խօսս՝
(ը՝ ոՀոյ աշխարհաբառ բառարանին ,) և յետուլ զնո-
սին ՝ի գրաբառն՝ հայելով յիմացուեաց նոցին ։

Հարցնարդ հմանաւոր բանք յաշխարհաբառ
'ի գրաբառն։

ա. Լաւագոյն է ասելոյ զանազան բանքերս։ որպէս
ցանեմ զնեմ եմ արդիւն լաւ բանքերս։
* Հաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ զայատ-
գամն։ ուստ ցից ձեզ զբանս իմ ॥ առակ։ ա։ 23։
բ. Կաղաչեմ զնեզ ազնիւր, որ մտիցէ ընդ դուռն մտիցարանքն բանիս։
* Հաղորդեմ զձեզ ի զբարիս մանսալ բանիս մտիցարուն ॥։
եբր։ ժգ։ 22։
գ. Լմանաւորութիւն մտիցէ ընդ, ոչ եմանաւորութիւն եղիցէ։
* Լոհարութիւն զիմաստութիւն, և իմաստութիւն զերուք ॥։
առակ։ ը։ 33։
դ. Դուռն մտիցէ ընդ նոսա՝ նոքանք հրամայօղ ըլլալ։
* Դուռք փակեալ լսելոյ՝ հրամանաւորս կամիք լինել ॥։
մատթէ։
ե. Պէտք է զնեզ՝ որ տէր խօսիցի, ոչ զարդ եմանաւորս։
* Պատուս է ձեզ սակաւ բարձրանալ և շատ իմանալ ॥։նեղոս։
զ. Մինչ՝ ինչ որ մեզի հրամայած է նոքա՝ ընեցէք, կիսոշմիսի պէս
բարձր պեղայ կանգնելով զիրենք անկանիլ։ արիւնքն ընելը՝ ոչ ընելը՝
ամենն մարդու երկնչելու է։
* Ասեք՝ զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք, ազատա-
կելով որպէս դէտ 'ի բարձր դիտանոցի 'ի լսելիս ձեր։
այսուհետև առնելն և ոչ առնելն 'ի կամս ազատուն
իւրաքանչիւր անձին է ॥։ զնորկ։ ընդհանր։
է. Զբանս որ զիրենն դիմը ընկնիցուն սկսիցարով՝ ոչ կարեցուն
ընական հուրուանքը սերբ։
* Մի՛ ոք 'ի ձենջ սիրեսցէ զկուրութիւն ոգ խուսութիւն ցա-
զագս ծուլութիւն ॥։ զնորկ։ ընդհանր։
ա. Որոնք որ պօշ բանքերս ասուն էրնինին, խելքանքնին պակաս է։
* Որք զհետ երթան զնանրութիւն, պակասամիտք են ॥։
առակ։ ժբ։ 11։ հեռապեր։
բ. Ամն որ եմանաւոր հեր խօսուաղիշ հըլլայ, եմանաւոն հըլլայ։
* Որ գնայ ընդ իմաստունս, իմաստուն եղիցի ॥։ ա.
առակ։ ժգ։ 20։
գ. Մուխայելիսկ մարդք՝ կարօտութիւն հզի հըլլայ։
* Ընդհոգն 'ի կարօտութիւն եղիցի ॥։ առակ։ ժգ։ 23։
դ. Մարդ մարդք՝ ամենն բանի կարօտայ։

* Ի նմանէն հաւատայ ամէն քանի ॥ . առակ . ԺԲ . 15 :
Ե . Իմէնմանել մարդը՝ նախանձն պիտի նէ , չմտքնար .
* Իմէպէտ և նախատի վատ , ոչ ամաչէ ॥ . առակ . Ի . 4 :
Զ . Շ ապիտի մարդը՝ իր նախիսուները ծածուկ կպահէ .
* Իսաքուցանէ զանարդանս իւր այր խորագէտ ॥ . առակ . ԺԲ . 16 :
Ա . Բարկանքդ մարդը՝ առանց մտածելու կիործէ .
* Բարկասիրտն գործէ առանց խորհրդոյ ॥ . առակ . ԺԴ :
Բ . Սիրն խօսքը՝ բարկուն գիւղատեղ կընէ :
* Բան խիստ յարուցանէ զբարկութիւն . առակ . ԺԵ . 1 :
Գ . Լ ամ է ապաքնէլը մարդը՝ գան նէ խուսէնելէն . վէ՞վոր իրը կուտ կիւղնէ՝ լամ է գան գանի , որ ամուր գաղտ կառնէ :
* Լ ամ է այր երկայնամիտ քան զհզօր . . . և որ յաղթէ բարկութիւն՝ քան զառնուցու զքաղաք հզօր ॥ . առակ . ԺԶ . 32 :
Դ . Լաւ նը որ կուտէ էր բարեմանութիւն գանուելիս , մահանայ կիրնարուն .
* Պատճառս խնդրէ այր , որ կամիցի քակել 'ի բարեկամաց իւրոց ॥ . առակ . ԺԵ . 1 . յեռաւոր :
Ե . Ովոր ընկերն կնայ բարկութիւն կիմարի , դիմաց կնայ պարծանք ունի .
* Ի՞նչ ոք՝ որ առ ընկերն բարկութիւն վարի , առ դևսն խաղաղութիւն ունի ॥ . սարգ . յակ . Դ . յորդ :
Զ . Ովոր ընկերին կարեկ ունի , սարսանայի կնայ կասալ ունի .
* Որ ոխս ունի ի ընկերի , դաշնաւոր է սգնոյն ॥ . նեղոս :
Է . Ի՞նչպէս ապառնուս կնայ սիրով միաբանութիւն ունենայ ան մարդը՝ որ գիմերու կնայ շարն է դրեր .
* Օ իարդ առ ոչ սիրով միաբանութիւն ունիցի , որ զիւսաց գաշնակիցն է ॥ . սարգ . Ա . յոգն . Է :
Ա . Ա՛էլ բանը չիկայ՝ որ անանկ եղկիարբ ցընէ գոնի աշկերտ որպիսութիւնը , ինչպէս որ սէրը :
* Ոչիք ինչ՝ որ այնպէս նկարագրէ զպատկերս աշակերտ տին քան , զոր սէրն ॥ . սարգ . Ա . յոգն . Է :
Բ . Սէրը՝ սինոս ու գաթ կառնէ .
* Սիրոյ սահման և չափ չկայ է ॥ . լամբ . եկեղ :
Գ . Ի՞նչերին սիրովը կնապարանի սարսանալ սէրը .
* Սիրով ընկերին սերն ոչ կատարի ॥ . սարգ . Ա . յոգն . Է :
Դ . Որ եղբօրը սիրուն կամար երբեն չի խաղար , իր մալին ինչ պէս խաղայ .
* Որ յանձն չինայիցէ սակս սիրոյ եղբօրն , յինչան զիարդ ինայեսցէ ॥ . սարգ . Ա . յոգն . Ը :

Ճ. Զոր երբեմն կորուսանելոն վրայ հաճախողն է, ինչպէս պիտի ուրեշն փրկուելը կամար մուխայնի ըլլայ.

* Որ զանձին կորուստ սնափոյթ առնիցէ, վասն այլոց զիարդ հոգ փրկուելոյ վարիցէ ॥. խոսրով։

ՃԱ. Ինչպէս որ խուզել չէ՝ որ մարդ մեկ ոչխով երկինքը նայի՝ ու մեկալները գեղինը, ասոր պէս ալ մարդը՝ չէ կրնար մուխայնի ըլլար ուրուրդու ու աշխարհի բաներուն.

* Որպէս ոչ կարելի է միով ակամբ նայել յերկինս՝ և միւսովն յերկիր, այսպէս միտք ոչ կարեն հոգալ զայն և զաշխարհիս ॥. վարք հարց. Է։

ՃԲ. Ղէոնիրա է ՃԾ, վէ ամենուն ուրոշ դրեր է երեն բարիդը. ու կուղէ որ ամենուն ալ լալէն զան. վէ կիարդնայ անոնց՝ որ յօժարութիւն չեն ուղեր առնուլ.

* Ուռատ է ՃԾ, և ամենեցուն առաջի եդ զպարգևս իւր. և կամի՝ զի ամենեքեան յափշտակեսցեն զայն. և բարկանայ այնոցիկ՝ որ ոչ մեծաւ յօժարութիւն փաքին առնուլ ॥. եփեսա. ծ. 5.

ՃԳ. Զոր լաւուն դեմ գեղ կընէն նէ, անոր գնէն չարը չպակսի.

* Որ հատուցանէ չար փխակ բարւոյ, չար 'ի տանէ նշմ մի պակասեսցէ ॥. առակ. ԺԷ. 13։

ՃԴ. Ամեր օրէնքին դեմ է՝ պերանոցը դեմ հելլէնպաղուն ընել.

* Ամենայն մերոց նենգութիւն ուրանց ॥. ղևորկիա. ղ. ընդհանր։

ՃԵ. Տկարները ուժովներէն ասլանմիշ կելլան.

* Տկարքն զզուշանան 'ի հզօրագունիցն ॥. մաքրէ։

ՃԶ. Ընենդի որ պառպանները մեզ կղբելնի, անոր կամար պէտք է՝ որ ապրինիս շատ բաց ըլլայ.

* Ա՛ զի 'ի մեզ որոգայթից շրջիմք, նմին իրի բազում արթնութիւն մեզ պէտք են ॥. ասրգ. ՃԱ. յովհ. Է։

ՃԷ. Խորուկ դնայերնէ ամենուս ալ. ու մեղի երաղ կերթանայ ՃԸ մարդուն.

* Խոր 'ի քուն ննջեմք ամենեքեան. և երազ թուի մեզ ՃՀմարտուին ॥. եղեզ. խրատ։

ՃԸ. Պուռուն ասկերը ՃԷնկ կղարձէ. ասանկ ալ խելացի վարդապետը էր աշկերտները՝ որ առաջինուն գործէն.

* Փող յորդորէ զզբոս 'ի պատերազմ. և իմաստուն վիպ՝ զաշակերտս իւր ի գործ առաքինութեան ॥. նեղոս։

ՃԹ. Ինչպէս ղբրիս հագնողը օխտով կղաքնու

զուանոցը պրոմաքեով չէ խոցոնիր ։

* Որպէս զրահաւորն նեռս ոչ ընունի ։ սոյնպէս անախտն ոչ խոցի 'ի տրտմուէ ॥ ։ Նեղոս ։

Գ ։ Փեհլեվանի պէս հանուն՝ , ու թէ եղրվը օծուն՝ ։ որ թու խասիդիս ֆեռոբը թու վրոդ էլիվիշ էբելայ ։

* Երկեաց իբր զամբշամարտիկ , և օծ իւղովն քոր ։ զի մի կռուեսցին 'ի քեզ ձեռք ախոյեանին ॥ ։ Եղիշ։ խրաբ ։

Դ ։ Ալ՝ն հրօնաւորը՝ որ հիշ բան մը չունի , նման է մերի գեղեղէ վանի՝ որ ոչ ելիչեն չի բանուն՝ ։

* Ուիայնակեաց անինչ՝ ըմբիշ է մերկ , որ ոչ զմիջոց ըմբռնի ॥ ։ Նեղոս ։

Ե ։ Ճ ապ մարդիկ ինամանդիսարուն՝ եանուն ընինելով՝ ճշմարտուն՝ մոլորեցան ։

* Ընդահուն ախտի ծառայելով՝ մոլորեցան 'ի ճշմարտուն՝ բաղումք ॥ ։ Լամբ ։ եկեղ ։

Զ ։ Տանի՝ աղէկ է լաւ անունը՝ քան ինչ շատ հարբսարուն՝ ։

* Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազմ ॥ ։ առակ ։ եբ ։ ։

Է ։ Քան զինուր ճանչալէն մենծ զէնիկնուն մը չէնայ ։

* Ոչ գոյ այլ ինչ մեծութիւն քան զծանօթութիւն անձին ॥ ։ գրիգ ։ կամ ։

Ը ։ Ծ՝ուանին պատուղը շատ ըլլայ նէ՝ պալերը վար կիջցնէ ։ ա սոր կիօրէ ալ՝ շատ առաքինուն՝ մարդուն դիտը կնանարկեցնէ ։

* Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց ։ այսպէս և առաքինուն բազմութիւն՝ զմիտս առն (խոնարհեցուցանէ) ॥ ։ Նեղոս ։

Ը ։ Տայանը վեր կիբռնէ պտղալէց պալերը ։ ասանկ ալ այ վանը՝ առաքինի մարդը ։

* Ելէ բառնայ զոստս պտղալիցս ։ և երկիւղն այ՝ զառաքինի անձն ॥ ։ Նեղոս ։

Գ ։ Ալ՝ առաքինուն՝ խիստ ուղղանա ու լայնիս է պղայոց բնուն՝ ։

* Լարի ինն յանկաւոր և պատշաճաղոյն է առաքինուն՝ բնութիւն մանկանց ॥ ։ ասրգ ։ ա ։ պեր ։ գ ։

Դ ։ Ա՝ եղանիրուս սիրեան մեղր կիշնին ։ ասոր կիօրէ ալ եղբարը՝ ներքուն ուղղուն գիսբանուն՝ առաքինուն ։

* Պարք մեղրնաց գօրծեն զմեղր ։ և հաւասար միտ քանուն եղբարց զառաքինուն ॥ ։ Նեղոս ։

Ա ։ Լանարի գիրը կալէնալ պարտ գաղտիմը նէ ։

* Բա

* Բաղաք պարսպեալ են միտք անհպարտք ॥ • Նեղոս։
Զ • Արիւնարան առաջինութիւնքդ պարծենալը՝ հիւլ քեայոյսդ լուն է •
* Ամ ինչ օգուտ յայլոց առաքինութիւն պանծալ ॥ • ոսկ •
մաթ • ա • 3 •
Գ • Հանդերձ որ զիրենք կիրառիցեն , փոխանակեալ լսոնցած են •
* Որ զանձինս գովեն , լի են պարսաւանօք ॥ • եփեսա •
ծբ • 10 •
Դ • Զինչ զահ ունի խօսքդ , երբոր գործդ խօսէն չինիցայեր •
* Որ օգուտ 'ի բանիցն ինչ , յորժամ գործքն բանիցն
չվիսայեն ॥ • սարգ • ա • յովն • 2 •
Ե • Ցանս խոնարհութիւնդ խօսոցդ չէ՛ խրատուքդ • զերբ հասկնայ
ալ նէ՝ չէ՛ մոռեր •
* Բանիւք ոչ խրատի ծառայ խիստ • զի թեպետեւ և զ
մանայցէ՝ ոչ հնազանդի ॥ • սոսկ • եբ • 19 •
Զ • Հանոյ հանար ինքդ ընելը՝ պօ՛ղնէ • զերբ քեայսան տէր է ,
ու զարարդը շատ •
* Ընդօգուտ է ինքն՝ որ վասն նոցին • զի շահն սակաւ
է , և ինքան յոլով ॥ • ընդրկ • ընդինքեր •
Է • Լսելոյ է ապաւանիս տէր մարդոյ շատ մարդու գործդը ընել •
* Դիւրին է այ սակաւուք զբազմաց գործ գործել ॥ •
եղեզեր վեպ • ի •
Ը • Հէլ պեղմը չէիցայ՝ որ զմեզ ապառնիս զարդ , դիպն մեղրը •
* Ամ՝ տեղի՝ որ որոշէ զմեզ յայ , բայց միայն մեղքն ॥ •
եփեսարիս • ծէ • 13 •
Թ • Մնէ որ մեռնիս չիշնիս մեր մեղրերը նէ , ամ կմոռնայ •
* Եթէ մեք յիշեմք զմեղս մեր , ամ մոռանայ ॥ • սաղ
գիս • ա • յովն • է • յորդ •
Ժ • Հանդերձ մարդ ինչ բանէ որ կիրքն նէ , կարծէ որ՝ ուրիշնալ
այնպէս է •
* Եմենայն ոք՝ յորոց կրքն՝ 'ի նոցն և զայլս կարծէ ॥ •
եփեսարիս • ծշ • 29 •
Ի • Հանդերձ գաղարդ՝ որ իշխան ունի , չէ՛ կրնար խաղաղութիւն մեզ տալ •
* Եռանց իշխանի ոչ կարէ կալ քաղաքն 'ի խաղաղութ
թեան ॥ • լամբ • եղեզ •
Ձ • Ինչպէս որ պաղ ջուրը խօ՛ղ է ծարաւ մարդու , սուր պէս
ալ՝ հեռու տեղէ եկած բարի խոսքը •
* Որպ ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է , նոյնպ
սաւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ ॥ • սոսկ • եբ • 25 •

 Է. Զի զոր պետնելը պահի՝ երաւ ի՝ տան ինչ անկանելոյ լսելը։
* Տեսուի աչաց հաւատարմագոյն է քան զլուր ակամ-
ջաց ‖ . սարգ . ա . յոգի . է։
Ը. Զի որ գեղոնի զիրայ հրաբերդենն, հեղնի շուտով կիանգնի .
ամա ան որ բարձր պեղէն հրնինի , շատ անգամ կիռնանի պիլէ։
* Որ գլուխի յերկրի , արագ անդրէն յառնէ . իսկ որ
անկանի 'ի բարձրուէ՝ բաղում անգամ և մեռանի ‖ .
Նեղոս։
Ա. Լսելէ սանքանիշ ըլլալնիրէն՝ պահա պէնէր վնասանեցայ .
* 'Ի զգուշանալն առաւել՝ յաւելտ վնասեցայ ‖ . Նարէ
հայր . ծէ։
Բ. Զրբ հրլլայ՝ որ մահին ցեռէն վախ լռանէնամ .
* Զրբ ելցէ՝ զի աներկիւղ եղէց 'ի մահոնանէ‖. Եղիշ։
Գ. Լա՛ որ արդարուէ՝ ելցանեցի՝ յովնէ մարգարէին բանին հրօրէ,
հապա ինչպէս պիտի հնձեմ ու ժողվեմ հինայ պտուղը .
* Ոչ սերմանեցի արդարութիւն ըս բանին յոսկեայ , և
զիարդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն ‖ .
Նար . ՅԳ։
Դ. Զանիկ դուրս բանէրու եկանէ ընկնելով՝ իմ բանիս չկաայ .
* Բանչատին ձգտիլ՝ իմոյն ոչ հասի ‖ . Նար . ծէ։
Ե. Կիսանին՝ ու չեմ հասկընար . կիանչին՝ ու հիլ չեմ լսեր . յան
կու պան , ու չեմ արինանար . Եարալանիլ հրլլամ , ու չեմ իմանար .
* Լսանին , և ոչ իմանամ . գոչեն , և ոչինչ լսեմ . բար-
բառին , և ոչ զարթնանամ . . . վիրաւորիմ , և ոչ ևս
զգամ ‖ . Նար . ծԲ։
Զ. Կծաղկիմ , ու պտուղ չեմ տար .
* Ծաղկիմ , և ոչ պտղաբերիմ ‖ . Նար . կա։
Է. Ամենել հէրգեմ , ու չեմ լբնոցըներ . տիլ կիլանդիմ , ու շատ
ընելէք հնեմ . տլնի մը հրերեմ , ու անհամար դայ հրնեմ .
* Հինն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստա-
կիմ, և թիւրս վատնեմ. դոյզն զանձեմ, և անթիւն
ապառնեմ ‖ . Նար . կա։
Ը. Հեռանանոյ մենք մենք կնոսիմ . ամա ճանրագ պալու ապէնը
ասու հրլլամ ու կպապանցիմ .
* 'Ի բացուստ ճանումն խոսիմ . և 'ի պինանատուութենն
պահու պապանձեալ կարկիմ ‖ . Նար . կա։
Ա. Հիմայ , ալ մեր բանին կարգը գոլենք , ու խոսինք տիլմ ընալ
երիրու արարածներուն վրայ .

* Ի՛ն

* Եւ արդ՝ այսու հետեւ փոխեսցուք զկարգ բանիս 'ի ճառս պատմութեան արարածոց երկրի ։ Վեցօր։ Է։

Զ։ Զայնչ ասեն զարարածսն երիր ինքեանն՝ որ երեանց հօրն խառնարանքն ծերուանէ ասուցեալքն, երիս դրէն խաչանուանքն կոչեցեալ, ուստ երեանց խառնարանքն վրայ կիրառանեն։ ուստ ինչ կերպիւրս որ գոնեն նէ՝ հուպան անոր։ ուստ ինչպէս որ անիկայ հոսուցէ երեանք՝ երեանցմէ անոր դեռ համացուսի համացուսի կերեանն։

* Իբրեւ տեսանեն ճայք թուլացեալ զթեւս հօրն իւրեանց 'ի ծերութենն, ասեն և անտի մտանեն, և բառնան գնա 'ի վերայ թեւոց իւրեանց։ և ջամբեն նմա կերակուր՝ զոր և դատանեն։ և ոչ սխորժէ երթալ նա՝ այնպէս զնմին երթան հանդարտիկ ։ Վեցօր։ Ը։

Զ։ Լ'խաղաղն (յուսը) ինչ յարի տեղ հանի ուստ յուսի նէ, անոր ըստինքը հանանի։ ուստ չկենարն ալ հաճարնուզ կերանն անոր տեղը, զերբ չկարծեն նէ յար է։ Վէ երեանց հուսէն՝ որ անոր տեղը մտնեն, ան ալ հապրճայ ընդեսար խաղանիդ ընելով անոնք հուպէ։

* Պողիպոդ՝ զնամ քարի, յոր հասանէ և հպի 'ի ծովուն զնորուն առնու զգոյն։ և ձկունք յանհոգս երթան լուզին զնովաւ, զի համարին՝ թէ քար ի լցէ։ և իբրև կամին մտանել զնովաւ, ըմբռնէ զորան պատրաստական, և ուտէ ։ Վեցօր։ Է։

Զ։ Զրի ինողպողին էյեր էնկերէնի մէն ուսէ, ուստ անկէ երեն դէն զարար մը ընէլայ նէ, կերիայ հուպէ նուպանի նանէ։ ուստ ալ նովի կանոնքնէ էր ցատը։

* Զբայնն կրիայ եթէ ուտիցէ 'ի մսոյ ի ժի, և տագնապ ինչ հասանիցէ նմա անտի, երթայ ուտէ դադնեւ։ և այնու անցուցանէ զտապ նեղութենն ։ Վեցօր։ Թ։

Զ։ Ամ՝ յին երբոր եարալանդիշ կըլլայ, ինչ զինչ կրնայ բնչ էր։ կերիայ կհանէ ջեօտ մը՝ որ կըսուի աղբր գոյրուշը։ կրբնէ անիկակ նարայնն վրայ, ուստ կբնծիրնէ։

* Ամբ յորժամ վերս առնու յանձին, ինքնին զանձն բժշկել գիտէ։ երթայ խլէ զարմատ մի, որ կոչի փոզմոս։ դնէ 'ի վերայ վիրացն, և առնու զբժշկութիւն ։ Վեցօր։ Թ։

ԺԱ։ Այնչ որ հուսէնանի՝ մրկի ընբ ուրիշ զարմանալի պատմութիւն մը։

* Ինչ կայիս, լուր միւս ևս աքանչելի պատմութիւն ։ Վեցօր։ Է։

Ը. Մէկ ճգնաւորը մը կիրեանայ յորդանան գետին դէմաբը. ասիկա մէկ օր մը խիստ պատուն համար մտաւ մէկ մաղարայ մը. ու պեսաս որ անդեղը մէկ մենծ ասլանմը պառկեր էր։ Քրիստոսանը երբեր պեսաս ճգնաւորը նէ, պաշլայեց մոմոսալ՝ ու ասկոնեբը կոնճրպել։ Ճգնաւորնալ ըսաց անոր, ի՞նչ պրպմբր ես. դեղիալ պեղ կայ հոս, ընչի ալ. հապա նէ դու չես ուզեր նէ, ել ու գնա։ Քրիստոսալ ան ասբենը հեռեն ելաս ու գնաց անկից.

* Ծերը ումն ընտակեր յեղը յորդանանու. և 'ի խստուն ասլիցն եմուտ (յաւուր միում) 'ի յայր ինչ. և եգիտ անդ ինքեալ առիւծ մի մեծ յոյժ. որ երբև ետես զծերն, սկսաւ գոչել և կրճտել զատամունս իւր։ Նոսա ցնա ծերն. ընդէ՞ր տրտմեալ ես. զի կայ ատ տեղն ինձ և քեզ. իսկ եթէ դու ոչ կամիս, արի՛ և գնա։ Նա առաջ ասելոյն յարեաւ առիւծն, և գնաց անտի։ Վարք հարց. ԺԷ։

Ը. Սքեն սրապիոն ճգնաւորը կենին մոտաս՝ որ երբեայ հոսամ. ու էր հեռը ուսուելու բան մը չտաներ։ Աղեկճիները երբեր փեսան՝ որ անիկա հինգ օրեն պերի բան մը չէր ուսեր, հարցուցին անոր, ինչու չես ուսեր պատալ ըլա. ան ալ ըսաց անոնց, պերե բան մը չտանիմ. անոնք ալ ըսին, հապա ընչու մոտը հոս. ան ալ ըսաց։ Էյեր ֆեր կենին մեկ զարարմը տուսի նէ, դարձուցնէ պիս՝ ուր որ գրպան։ Քրիստոսնալ ալ ելքիսիդ ըրին, ու չգիտան՝ ինչ ոգի է դրեր անիկա կենին. եարը երենք կերակուր տուին անոր, ու պարին հոսամ.

* Սքեն սրապիոն եմուտ 'ի նաւ՝ գնալ 'ի հռոմ, ոչ ինչ ունելով առ 'ի պէտս իւր։ Իսկ նաւավարքն երբև տեսին՝ զի յաճրնամ օրէ անտի մինչև ցհինգերորդ օրն ոչ ինչ ուտէր ծերն, ասեն ցնա, ընդ ո՞չ ուտես հայրիկ. ասէ ցնոս, զի ոչ ունիմ ինչ. ասեն ցնա, և ընդ մտեր այսր. և ասէ ծերն, լցէ՛ ջնաս ինչ արտրինաւիդ, դարձուցէք զիս՝ 'ի տեղին՝ ուր գտիք։ Իսկ նոքա քննեալ՝ ոչ գտին, լցէ՛ ոմ եդ գնա 'ինաւն. ապա առեալ կերակրեցին զնա, և տարան 'ի հռոմ։ Վարք հարց. էջ. 13։

Ը. Մէկ եշխան մը էրօնաւորը եղաս. ու էր բոլոր մալը աղքատներու բաժնեց. ամա չիչ մընալ էրբեն համար պահեց. ինչ չուզեց՝ որ վրան առնու կապարելալ հնապանդուն, ու խոնարհուն, ու աղքատուն։ Գրեց ասոր սէ բարեսեղը սասանկ բան մը. ինչ էշխանաուն՝ էրօնաւորուն էրբեր, ու էրօնաւորուն՝ էշխան։

* Ի՛նչ-

* Իշխան ոմն եղև կրօնաւոր . և զամ ինչս իւր բաժանեաց աղքատաց . և կալաւ սակաւ ինչ՝ ի պէտս իւր. և ոչ կամեցաւ առնուլ յանձն զկատարեալ հնազանդութիւն և զխոնարհութիւն և զանընչութիւն ։ Բ. ռ սա գրեաց մեծն բասիլիոս այսպէս . զիշխանութիւն քոյ կորուսեր , և զմիանձնութիւն ոչ գտեր ॥ . Վարք հարց . Ը ։

Տէ՛ ալ պէտ է ՝ դէպ՝ որ մեր խօսքը դադրեցընենք . զէրբ ինչ որ մինչև հոս ըսուեցաւ նէ՝ յեր սիրոտ նախանձը արթնցընելու համար՝ հերիք է. գիտնալով ան բանը՝ որ կըսուի , նէ զայ խօսքը անկաճ կդաւոյընէ .

* Եւ արդ՝ պատշաճ է մեզ տալ հանգիստ բանիս . զի բաւական են՝ որք ճառեցանն մինչև ցայսմայր՝ առ՝ ի զարթուցանել զնախանձ սիրոյդ ձերոյ ॥ . Ա Ղեգոր . Ա ։
* գիտելով զասացեալն՝ թէ առաւելուն բանի պատերազմող է լսելեաց ॥ . Ղնորդ . Ի՝ Ղ Ա ։

Յայսմ վայրի և ես տաց աւարտ գործոյս՝ ի փառս քրիստոսի , և՝ ի պատիւ ամենօրհնեալ մօր նորա սքանչածնին ։

ԱՄԽՄԱՆ ։

Ց Ա Ն Կ

*Հարկաւոր գիտելեաց պարունակելոց յերկրորդ և յեր-
րորդ մասին այսր քերականութեանս ըստ կարգի
այբուբենից։*

Աբեղեան անուն. 113
201. 208
Աբեղեան առանց գոյա-
նեանի. 113. 207
Աբանոյեան անուն. 121
Աբանոյեան դերան". 138
Աբանոյեանակերպ մա-
նիկ. 122
Անբանոյն բայ. 158. 267
Անանուն բայ. 143
Անիծուար ժամանակ. 150
Անմանական գոլով. 129
Անուն. 111. 184
Անուն բայի. 232
Անձեալ ժամանակ. 150
Անցեալեան բայ. 148. 248
Պատանի ժամանակ. 150
Ապագեան բայ. 143
Բգիելել խնդրոյ. 268

Բաղադրեալ անուն. 121
Բաղադրեալ բայ. 146
Բաղդատական ածականք. 114
Բայ. 142. 231
Բան. 209. 280
Բանք յաշխարհաբարէ 'ի
գրաբարն. 323
Բառ. 108
Բարդ անուն. 119
Բարդ բայ. 146
Բայցայտական. 184
Բայտական գոլով. 131
Բղխմանք բայի. 163
Բռնի. 296

Գերադրական ածականք. 124
Գերական ուրար ժամ. 150
Գեր. 102
Գլխաւոր մասունք տերա-
կանութեան. 101
Գոյական անուն. 112. 184
Գոյականք 'ի տեղի ածա-
կանաց. 207
Գործական գոլով. 132

Դերանուն. 136. 217
Դերբայք. 159. 269
Դեմք բայի. 149
Դեմք դերանուանց. 139
Դեմարդական. 137. 228
Դրդեմ բայք. 152. 275
Դրական ածականք. 114

Լանական բայի. 153
Լնիանմամբ. 294
Լքիար. 298

Լական բայ. 143. 262
Լական դերան". 136. 218

Ներկանուր կամ հասարակ
անուն. 112
Ներանելութիւն. 163. 270
Ներանել", եալ. 166. 274

Ներա-

Ընդունել՝, լէ։ 168։ 277
Ընդունել՝։ լը։ 167
Ընդունել՝։ օշ։ 165։ 272

Դաս։ 295
Դեմ՝ անառնանց։ 127
Դեմ՝ բայից։ 149
Դեմ՝ դերանունանց։ 140
Դեմ՝ ընդունելուոյ։ 164
Դառնական անառնանց։ 116
210։ 209

Զամանակ բայից։ 150
Զամանակ ընդունելուոյ։ 164

Ցոդդուել՝ բայից։ 161
Ցոնմուն՝ զարդարուոյ։ 287

Ինդիր ածական անառնանց։ 194
Ինդիր ածականաց յանգելոց՝ ի՝ էլ։ 198
Ինդիր բաղդատական անունանց։ 200
Ինդիր բայի։ 238։ 264
Ինդիր բնուն կրաւորական բայից։ 252
Ինդիր բնուն ներգործական բայից։ 241
Ինդիր գոյական անառնանց։ 191
Ինդիր գիմաղուրկ բայից։ 261
Ինդիր էական բայից։ 262
Ինդիր ընդհանրական անառնանց։ 209
Ինդիր դարձական անառնանց։ 209
Ինդիր հատուցական անառնանց։ 209
Ինդիր չեղոքական բայից։ 253
Ինդիր սեռուն կրաւորական բայից։ 252
Ինդիր սեռուն ներգործական բայից։ 239
Ինդարձնող բայից։ 160
Ինքերին զարդարուն։ 282

Լայնուն բանի։ 280
Լանուանաւոր բայ։ 143
Լարարեալ ժամանակ։ 150
Լեռարդուն։ 292
Լոյսական հոլով։ 132
Լրաւորական բայ։ 144

Մանաչայնուն ածական անառնանց՝ ընդ ածական։ 208
Մանաչայնուն ածական անառնանց՝ ընդ գոյական։ 201
Մանաչայնուն անառնանց ընդ դիմեանս։ 184
Մանաչայնուն բայից։ 232
Մանաչայնուն դերանունանց ընդ անառնանս։ 218
Մանաչայնուն դերանունանց ընդ դիմեանս։ 217
Մանաչայնուն ընդունելուոյ։ 207
Մանաչայնուն դիմական անառնանց։ 209
Մանաչայնուն հատանց բանի։ 183
Մանաւորուն դերականուն։ 301
Մայրական հոլով։ 130
Մանրական անառնանց։ 212
Մասարակ բայ։ 144
Մարդական անառնանց։ 116
214։ 209
Մարդուն և պատասխանի։ 279

Յուսուկեան անուն . 112
Յոլովմնոյ անուանանց . 133
Յոլովք անուանանց . 129
Յոլովք և հոլովմանոյ դէպ
քանանանց . 140
Յոլովք ընդոանելուէց . 164
Յրամայական եղանակ . 154

Նոյ անուանանց . 119
Նոյ բայէց . 146
Նոյ ընդոանելուէց . 164

Պակէաց . 174
Պանական անուանանց . 116
215 . 209
Պասուն բանք . 111
Պէլակ շարադրութիւն . 281
Պէլակեան անուանանց . 115 . 209
Պէլակէաց . 292
Պէլարիութիւն . 281

Շանանանութիւն բայէց . 147
Շարկացուցիչ . 188
Շարան անուն . 112 . 187
Շարաբարդ անուն . 121
Շարաբերական դերանուն . 137 .
141 . 224
Շարակարար ժամանակ . 150
Շրմարտարարութիւն . 291

Ա՛խարարաղարար կամ նա
խադրեալ անուն . 121
Ա՛խարարաղարար բայ . 148
Ա՛խարարաղարար դերան՝ . 138
Ա՛խարարութիւն . 168
Ա՛խարեր ածականաց . 205
Ա՛խարեր դերանանանց՝
այս , այդ , այն . 221

Ա՛խարեր 'ի բնայայարական . 187
Ա՛խարեր 'ի յարակցու
թիւն . 189
Ա՛խարեր ճանարոյ բայէց . 266
Ա՛երգոյական հոլով . 132
Ա՛երգոյական բայ . 144
Ա՛երկայ ժամանակ . 150
Ա՛շանագիր . 300
Ա՛շանարարութիւն . 295

Շաղկապ . 180
Շեղաբ . 296

Ընդակ . 299
Ուղղական հոլով . 129

Ձեղուական բայ . 145

Պարական հոլով . 131
Պարանարարութիւն . 299
Պարագայ անուանանց . 117
Պարագայ բայէց . 144
Պարագայ դերանանանց . 138
Պարագայ ընդոանել՝ . 164
Պարտական հոլով . 132
Պարզ անուն . 119
Պարզ բայ . 146
Պարզ շարադրութիւն . 281
Պարոյկ . 299
Պէսպիսութիւն շարադրութիւն . 280

Սահմանական եղանակ . 153
Սեռական հոլով . 129
Սեռ անուանանց . 117
Սեռ բայէց . 144
Սեռ ընդոանելուէց . 164
Սպասական դերանուն . 137 .
141 . 223

Սպա-

Յանկ կարիւորք գիտելեաց։ 335

Սորբոնական եղանակ։ 155
Սորբէր։ 299

Վանք։ 106
Վերայեալ անուանք քա-
խանակ աշխարհի։ 208
Վերբերական անուանք։ 115։
213
Վերջակէտ։ 292

Տառ։ 102
Տասէր անուանց։ 121
Տասէր բայից։ 148
Տեսակ դերանուանց։ 138
Տեսակ ընդհանելոցն։ 164
Տրական հոլով։ 129

Յոգնական դերանուն։ 136։
140։ 219։ 220։ 222

Փարեղնակէր, կամ քա-
կգեծ։ 293

Քերականութիւն։ 101

Օրինակ պէսպէս շարա-
դրութեան։ 283

Am/

Wp 2

3 r



Wp